Լրամշակված նախագիծ

Կ-1139[2]-20.08.2025-ՊԻ-011 *Երկրորդ ընթերցում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի, ի դեմս՝ տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմավորման և գործունեության կարգը, կարգավիճակը, անդամներին ներկայացվող պահանջները, անկախության երաշխիքները, տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության հետ կապված հարաբերությունները, իրավասությունների, վերահսկողության շրջանակը և լիազորությունները:

Հոդված 2. Հանձնաժողովի կարգավիճակը և իրավասությունների շրջանակը

1. Հանձնաժողովն ինքնավար մարմին է, որն ապահովում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրությամբ իր իրավասության ներքո գտնվող խնդիրների իրականացումը, կազմակերպում է տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցառումների համակարգի մշակման աշխատանքները և համակարգում է տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցառումների իրականացումը:

2. Հանձնաժողովը կազմակերպում է.

1) ազգային նույնականացման շերտի, այդ թվում՝ անձի էլեկտրոնային նույնականացման, թվային ստորագրության ու գաղտնագրման ծրագրային ապահովումների համակարգի, տեղեկատվական մուտքի հարթակի (hartak.am), «Ես եմ» նույնականացման հարթակի մշակումը, կառավարումը, զարգացումը, հոսթինգը և օգտագործումը.

2) թվային ճարտարապետության, այդ թվում՝ պետական տեղեկատվական համակարգի տեղեկություններին թվային անվտանգ միջավայրում հասանելիության, կառավարական ցանցի, տվյալների փոխանակման և այլ շերտերի, պետական տեղեկատվական համակարգի կառավարման համակարգի, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջգերատեսչական համակարգի մշակումը, կառավարումը, զարգացումը, հոսթինգը և օգտագործումը, միջազգային պայմանագրերի հիման վրա դրանց ինտեգրումն այլ տեղեկատվական համակարգերի:

Հոդված 3. Համագործակցությունը

1. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների պետական մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ, կարող է կնքել հուշագրեր և իրավաբանական պարտադիր ուժ չունեցող միջազգային բնույթի այլ փաստաթղթեր:

2. Հանձնաժողովն օրենսդրությամբ նախատեսված գործառույթները «Կիբեռանվտանգության մասին» օրենքով նախատեսված կարգավորող և վերահսկող այլ մարմինների կողմից կարգավորվող և վերահսկվող անձանց նկատմամբ իրականացնում է այդ մարմինների հետ համագործակցության հիման վրա: Հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների համագործակցության ձևերն են.

1) կարգավորող և վերահսկող այլ մարմինների կողմից կարգավորվող կամ վերահսկվող անձանց առնչվող ոլորտներում տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ խնդիրների մասին Հանձնաժողովը տեղեկացնում է համապատասխան մարմնին.

2) կարգավորող և վերահսկող այլ մարմինները օրենքով նախատեսված դեպքերում տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ իրավական ակտեր ընդունելուց առաջ ներկայացնում են Հանձնաժողով՝ խորհրդատվական կարծիքի.

3) Հանձնաժողովի նախագահը ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների ղեկավարները ընդունում են համատեղ հրամաններ, որով կարգավորվում են՝

ա. Հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների միջև տեղեկատվության փոխանակման դեպքերն ու կարգը.

բ. համապատասխան ոլորտում տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ համագործակցության ընթացակարգերը կարգավորող, ինչպես նաև Հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների օրենքով սահմանված իրավասությունների շրջանակից բխող այլ հարցեր.

գ. Հանձնաժողովի կողմից կարգավորող և վերահսկող մարմնի վերահսկողական գործառույթների իրականացմանն օժանդակելու կարգն ու պայմանները:

Հոդված 4. Հանձնաժողովի հիմնական խնդիրները

1. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման խթանման և պաշտպանվածության ապահովումը.

2) սույն օրենքի, այլ օրենքների և դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի կիրառման ապահովումը, դրանց խախտումների կանխարգելումը.

3) Հայաստանի Հանրապետությունում պետական տեղեկատվական համակարգի միջոցով ծառայություններ մատուցելու խթանմանը նպաստող պայմանների ստեղծումը.

4) օտարերկրյա պետական տեղեկատվական համակարգերի և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը.

5) կիբեռանվտանգության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման նպատակով Կառավարության քաղաքականության մշակմանը մասնակցելը.

6) պետական տեղեկատվական համակարգի կառավարման ապահովումը.

7) նույնականացման, թվային ստորագրության և գաղտնագրման ծրագրային ապահովումների մշակման կազմակերպման և ղեկավարման աշխատանքները.

8) օրենքով նախատեսված այլ խնդիրների իրականացումը:

2. Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված իրավասությունների սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական իրավական ակտեր, այդ թվում՝ նորմատիվ բնույթի:

3. Հանձնաժողովը սույն օրենքի կիրառման վերաբերյալ կարող է հրապարակել խորհրդատվական բնույթի ցուցումներ, ուղեցույցներ:

Գ Լ Ո Ւ Խ 2
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Հոդված 5. Հանձնաժողովի կազմը և անդամներին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ նախագահ և 4 անդամ:

2. Հանձնաժողովի անդամների պաշտոններն ինքնավար պաշտոններ են:

3. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող անձը, որն ունի.

1) առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 5 տարին քաղաքական, ինքնավար, վարչական կամ հայեցողական պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման կամ համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) կամ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառներում և,

2) կիբեռանվտանգության, տվյալների մշակման, պաշտպանության, օգտագործման կամ հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտների օրենսդրության վերաբերյալ գիտելիքներ, որոնք կարող են հաստատվել գործատուի կողմից տրված աշխատանքային փորձի կամ կատարված աշխատանքի նկարագրության վերաբերյալ կամ այլ տեղեկատվությամբ:

Հոդված 6. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը:

2.Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հանձնաժողովի նախագահ կամ լիազորությունների ամբողջ ժամկետով՝ Հանձնաժողովի անդամ:

3. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը՝

1) չի համապատասխանում սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին.

2) լրացել է նրա 65 տարին.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է դիտավորությամբ կատարած հանցագործության համար.

5) օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

6) ունի Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդություն.

7) վերջին հինգ տարիների ընթացքում ունեցել է Հանձնաժողովի գործունեության ոլորտներում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

4. Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը: Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Կառավարությունը՝ երկու անդամ, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը՝ մեկական անդամ: Ընդ որում, եթե Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավելի են, ապա Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները հանձնաժողովի անդամի համապատասխան թափուր պաշտոնում առաջադրում են նախապես համաձայնեցված մեկ միասնական թեկնածու: Կառավարությունը Հանձնաժողովի անդամների թեկնածուներ առաջադրելիս պետք է առաջնորդվի առավելագույնս տարբեր մասնագիտական կարողություններով և գիտելիքներով օժտված թեկնածուներ առաջադրելու սկզբունքով՝ սույն օրենքով սահմանված իրավասությունների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով:

5. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պաշտոնում թեկնածուն առաջադրվում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահ կամ անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Կառավարությանը կամ Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում: Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնում սահմանված

ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

6. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պաշտոնում նշանակումը կատարվում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:

Հոդված 7. Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետը

1. Հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի և Հանձնաժողովի առաջին կազմի:

2. Եթե Հանձնաժողովի անդամի պաշտոնում նշանակումը կատարվում է մինչև այդ պաշտոնի թափուր դառնալը, ապա Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետն սկսվում է այդ պաշտոնը թափուր դառնալու օրվանից:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում Հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է նախորդ անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակահատվածը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի, որին գումարվում է մնացած ժամանակահատվածը: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնն առաջացել է այդ պաշտոնը զբաղեցրած անդամի՝ Հանձնաժողովի նախագահ նշանակվելու հետևանքով, ապա այդ թափուր պաշտոնում Հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածով: Եթե Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի, որին գումարվում է մնացած ժամանակահատվածը:

4. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի նախագահ է նշանակվում Հանձնաժողովի անդամներից մեկը, ապա նա պաշտոնավարում է մինչև իր՝ որպես Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի, որին գումարվում է մնացած ժամանակահատվածը:

5. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև նրա 65 տարին լրանալը:

Հոդված 8. Հանձնաժողովի անդամի գործունեության երաշխիքները

1. Հանձնաժողովի անդամն անկախ է և գործում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Հանձնաժողովի անդամը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր լիազորություններն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած որոշման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա արարքում առկա են հանցագործության հատկանիշներ:

3. Հանձնաժողովի անդամն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո չի կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել պաշտոնավարման ընթացքում Հանձնաժողովի իրականացրած վարչական վարույթի հետ կապված, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում թույլ տված սխալների և չարաշահումների քննության դեպքի:

4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Հանձնաժողովի անդամի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել, կամ Հանձնաժողովի անդամը կարող է ազատությունից զրկվել Գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա միայն Հանձնաժողովի համաձայնությամբ՝ Հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամն առանց Հանձնաժողովի համաձայնության կարող է զրկվել ազատությունից, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Հանձնաժողովի անդամին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Հանձնաժողովի նախագահին:

Հոդված 9. Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները

1. Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, հանդիսանալ որևէ կուսակցության անդամ կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

2. Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Հոդված 10. Հանձնաժողովի նախագահը

1. Հանձնաժողովի նախագահը՝

1) իր իրավասության շրջանակում ներկայացնում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում, միջազգային և այլ կազմակերպություններում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների պետական մարմինների, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների հետ, կարող է կնքել հուշագրեր և իրավաբանական պարտադիր ուժ չունեցող միջազգային բնույթի այլ փաստաթղթեր.

2) ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այդ նպատակով տալիս է հանձնարարականներ, սահմանում է Հանձնաժողովի անդամների համակարգման ոլորտները, ըստ ոլորտների կատարում է աշխատանքի բաշխում Հանձնաժողովի անդամների միջև.

3) հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում է նիստի օրակարգը.

4) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները.

5) համակարգում և ապահովում է Հանձնաժողովի, նրա անդամների բնականոն աշխատանքը.

6) Հանձնաժողովի անդամների և իր կողմից նշանակվող աշխատողների համար հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, իր իրավասությունների սահմաններում աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հանձնաժողովի աշխատողներին, դատարանում հանդես է գալիս Հանձնաժողովի անունից, տալիս է Հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, ընդունում է հրամաններ, ներառյալ՝ համապատասխանության գնահատում, մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ.

7) կազմակերպում է Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների կատարումը.

8) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

2. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակվելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի՝ տարիքով ավագ անդամը:

Հոդված 11. Հանձնաժողովի անդամը

1. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին և քվեարկում, Հանձնաժողովի նիստի ժամանակ կարող է հանդես գալ ելույթներով, հարցերով և առաջարկություններով.

2) մեծամասնության կարծիքից տարբերվող կարծիք ունենալու դեպքում ներկայացնում է հատուկ կարծիք.

3) իր լիազորությունների սահմաններում համակարգում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքները, տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն, ապահովում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականների իրականացումը.

4) իր լիազորությունների սահմաններում հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում է քննարկումներ, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

5) իր լիազորությունների սահմաններում Հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր.

6) Հանձնաժողով և Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է առաջարկություններ:

Հոդված 12. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցումը

1. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) լրացել է նրա պաշտոնավարման տարիքը.

2) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

3) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

4) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է տվել.

5) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

6) նրա նկատմամբ պաշտոնավարման ընթացքում կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ.

7) նա մահացել է.

8) նա օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները Հանձնաժողովի եզրակացության հիման վրա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով դադարեցվում են, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդություն.

2) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է Հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից.

3) նա մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից.

4) նա խախտել է Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.

5) նա պարբերաբար չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր պաշտոնեական պարտականությունները.

6) պաշտոնավարման ընթացքում պարզվել է, որ նա նշանակման պահին չի համապատասխանել Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջներին, կամ առկա են եղել նշանակումը խոչընդոտող հիմքեր:

3. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են:

4. Հանձնաժողովի նախագահը կամ սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացությունը դրա ընդունման օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

5. Ազգային ժողով հրաժարական ներկայացնելիս Հանձնաժողովի անդամն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որի առաջարկությամբ նա նշանակվել է Հանձնաժողովի անդամ:

6. Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երեք, և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, իսկ այլ հիմքով Հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի նախագահը կամ սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամն այդ մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որն իրավասու է տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու՝ միաժամանակ նշելով սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ

մասով սահմանված պահանջները, որին պետք է համապատասխանի Հանձնաժողովի տվյալ անդամը:

7. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցվում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացության ընդունման պահից մինչև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով որոշման ընդունումը:

Հոդված 13. Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Հանձնաժողովի օրենքով նախատեսված գործառույթների իրականացման համար ձևավորվում են հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ:

2. Հանձնաժողովի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները քաղաքացիական ծառայողներ են: Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է: Հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և այլ օրենքներով:

3. Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները համարվում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներ:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

Հոդված 14. Հանձնաժողովի անդամների և ծառայողների վարձատրությունը

1. Հանձնաժողովի անդամների և քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով, իսկ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների համար ապահովվում է յուրաքանչյուր աշխատողի կոմպետենցիաների շրջանակին համապատասխանող վարձատրություն՝ հաշվի առնելով «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Կիբեռանվտանգության մասին» օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և

19-րդ հոդվածով սահմանված կազմակերպությունների աշխատողների համադրելի կոմպետենցիաների համար աշխատանքի շուկայում վարձատրության միջին չափերը: Սույն մասում նշված կազմակերպությունների համադրելի կոմպետենցիաներով աշխատողների շուկայական վարձատրության վերաբերյալ տեղեկատվություն Հանձնաժողովը ստանում է հարկային մարմնից, որը տեղեկատվություն տրամադրում է Հանձնաժողովի դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովը կարող է նաև նշված տեղեկատվությունը ստանալ սույն մասում նշված կազմակերպություններից: Աշխատողների աշխատանքի շուկայում վարձատրության միջին չափերը որոշելու համար հիմք է ընդունվում հարկային մարմնի հետ ճշգրտված տեղեկատվությունը:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների վարձատրության մեթոդաբանությունը հաստատում է Հանձնաժողովը:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում պարգևատրման կարգը, բացառությամբ քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատականի հիման վրա պարգևատրման կարգի, հաստատում է Հանձնաժողովը:

Գ Լ Ո Ւ Խ 3
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 15. Հանձնաժողովի գործունեությունը

1. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Սահմանադրությանը, սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան և իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն է:

2. Հանձնաժողովի գործառույթների և լիազորությունների իրականացման ընթացակարգերի մանրամասները սահմանվում են Հանձնաժողովի աշխատակարգով:

Հոդված 16. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) իրականացնում է վերահսկողություն տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության պահպանման նկատմամբ.

2) տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում ընդունում է կարգավորող իրավական ակտեր և իրականացնում է օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ, այդ թվում՝

ա. հաստատում է խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցներ.

բ. իրազեկում է հանրությանը տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառին առնչվող հարցերի մասին.

գ. տալիս է պարզաբանումներ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ.

դ. օրենքով նախատեսված դեպքերում տալիս է եզրակացություն.

ե. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց կամ դրանց պաշտոնատար անձանց տալիս է զգուշացում այն գործողությունների կամ վարքագծի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմանը կամ այդ բնագավառներում մեծացնել անվտանգային ռիսկերը, այդ ուղղությամբ ընդունում է կարգավորող ակտեր.

3) հարուցում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն.

4) իրականացնում է վերահսկողություն՝ Հանձնաժողովի որոշումների կատարման (պահպանման) նկատմամբ.

5) կազմակերպում է կիբեռանվտանգությանը սպառնացող ռիսկերի մոնիտորինգ, վերլուծություն և իրականացնում է պետական ու օրենքով նախատեսված այլ տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովում.

6) կազմակերպում է թվային ճարտարապետության մշակումը, կառավարումը, զարգացումը, հոսթինգը, օգտագործումը և հասանելիության ապահովումը, այդ թվում՝ պետական տեղեկատվական համակարգի տեղեկություններին և կենտրոնական հարթակներին հասանելիության ապահովումը թվային անվտանգ միջավայրում.

7) կազմակերպում է ազգային նույնականացման շերտի մշակման, կառավարման, զարգացման և անխափան հասանելիության ապահովման աշխատանքները.

8) կազմակերպում է հանրային տեղեկությունները ամպային տիրույթում տեղակայման կառուցակարգերի մշակումը, կառավարումը և զարգացումը.

9) սույն օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ դիմում է պետական, տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի կամ դրանց պաշտոնատար անձի վերադասին, իսկ վերադաս չունենալու դեպքում՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական անձին կամ դրանց պաշտոնատար անձանց.

10) դիմում է դատարան՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց և դրանց պաշտոնատար անձանց տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրությունը խախտող ակտերը, գործողությունները և անգործությունը ոչ իրավաչափ կամ անվավեր ճանաչելու, դադարեցնելու կամ դրանցից ձեռնպահ մնալու պահանջով, եթե այդ վեճը հնարավոր չէ լուծել վարչական կարգով կամ բանակցությունների արդյունքում.

11) օրենքով սահմանված դեպքում դիմում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում աջակցություն ստանալու նպատակով.

12) ամփոփում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության կիրառման փորձը և առաջարկություններ է մշակում դրա կատարելագործման ուղղությամբ.

13) մասնակցում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում պետական քաղաքականության մշակմանը.

14) հաստատում է իր աշխատակարգը.

15) սահմանում է Հանձնաժողովի վարչական վարույթի վերաբերյալ գործերի և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները, ինչպես նաև Հանձնաժողովի գործավարության կարգը.

16) սահմանում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում խախտումների վերաբերյալ արձանագրությունների ձևը.

17) գնահատում է անձը հաստատող փաստաթղթի տվյալների կրիչի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը օրենքով և դրա հիման վրա ընդունված ակտերով սահմանված պահանջներին.

18) սահմանում է Հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը.

19) սահմանում է Հանձնաժողովում տեղեկությունների դասակարգման կարգը.

20) օրենքով նախատեսված դեպքերում կազմակերպում և ապահովում է կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների կիբեռանվտանգությունը.

21) օրենքով նախատեսված դեպքերում կազմակերպում և իրականացնում է կիբեռանվտանգության միջադեպերին արձագանքման գործառույթները, համակարգում է կիբեռմիջադեպերի կանխարգելումը.

22) համագործակցում է քաղաքացիական հասարակության կառույցների հետ.

23) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

2. Հանձնաժողովը սույն հոդվածով նախատեսված լիազորությունների իրականացման ժամանակ և օրենքով նախատեսված այլ դեպքերում կարող է ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, ներքին և անհատական բնույթի իրավական ակտեր:

3.Հանձնաժողովի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման ընթացքում քրեորեն հետապնդելի արարքի հատկանիշներ հայտնի դառնալու դեպքում եռօրյա ժամկետում Հանձնաժողովն այդ մասին տեղեկացնում է իրավապահ մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով: Անդրսահմանային կիբեռմիջադեպերի մասին հատկանիշներ հայտնի դառնալու դեպքում Հանձնաժողովը, նախքան այն կիբեռմիջադեպի հնարավոր դերակատարին վերագրելը, տեղեկացնում է արտաքին հարաբերությունների ոլորտում լիազորված մարմնին և հրապարակային հայտարարությունները նախօրոք քննարկում է այդ մարմնի հետ:

4.Հանձնաժողովի նախագահն ընդունում է անհատական և ներքին իրավական ակտեր՝ որոշումներ ու կարգադրություններ:

Հոդված 17. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները

1. Հանձնաժողովն ընդունում է որոշումներ և եզրակացություններ:

2. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ընդունվում են գրավոր, բացառությամբ ընթացակարգային հարցերի քննարկման կամ ըստ էության որոշում չընդունելու (այդ թվում՝ դռնփակ նիստ գումարելու, հարցը քննարկումից հանելու, քննարկումը հետաձգելու, օրակարգում լրացուցիչ հարց ընդգրկելու, աշխատողներին հանձնարարություն տալու, նիստից հեռացնելու մասին որոշումները և այլն) դեպքերի: Հանձնաժողովի հայեցողությամբ այդ որոշումները ևս կարող են ձևակերպվել գրավոր:

3. Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ, պետական մարմնի միջնորդությամբ կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ

իրավաբանական անձանց դիմումի հիման վրա կարող է պարզաբանել իր որոշումները և եզրակացությունները՝ առանց փոխելու դրանց բովանդակությունը:

Հոդված 18. Հանձնաժողովի նիստերը, քննարկումները և դրանց անցկացման կարգը

1. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ընդունվում են նիստում:

2. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի պահանջով, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված այլ դեպքերում:

3. Հանձնաժողովի նիստն անցկացվում է Հանձնաժողովի գտնվելու վայրում կամ Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ այլ վայրում:

4. Հանձնաժողովի նիստը նախագահում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անդամը:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն չորս անդամ:

6. Հանձնաժողովի նիստերը կարող են կազմակերպվել հեռավար: Հանձնաժողովի անդամը նիստին կարող է մասնակցել հեռավար՝ Հանձնաժողովի նիստը նախագահողի համաձայնությամբ:

7. Հանձնաժողովի նիստին կամ դրա առանձին մասին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է նիստը նախագահողը:

8. Նիստին մասնակցող անձինք իրավունք ունեն կատարելու գրառումներ, սղագրություն և ձայնագրություն: Նիստի ընթացքում լուսանկարահանումը և տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ հեռահաղորդակցության կապի այլ միջոցով կատարվում են նախագահողի թույլտվությամբ:

9. Եթե նիստին ներկա անձանցից որևէ մեկը խախտում է նիստի կարգը կամ անհարգալից վերաբերմունք է դրսևորում Հանձնաժողովի կամ այլ անձանց նկատմամբ, ապա Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել նիստի անցկացման վայրից նրան հեռացնելու և նրա բացակայությամբ նիստը շարունակելու վերաբերյալ:

10. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Գրավոր արձանագրությունն ստորագրում են Հանձնաժողովի՝ նիստին մասնակցած բոլոր անդամները:

11. Շահագրգիռ անձանց շահերի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով Հանձնաժողովը որոշում է կայացնում նիստը կամ դրա առանձին մասն անցկացնել դռնփակ:

12. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին հարցը քննարկվում է դռնփակ:

13. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին որոշում կայացվելու դեպքում նիստին կամ դրա առանձին մասին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 19. Հարցի քննարկմանը և քվեարկությանը Հանձնաժողովի անդամի մասնակցության անհնարինությունը

1. Հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հարցի քննարկմանը և քվեարկությանը, եթե առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված բացարկ հայտնելու հիմքերից որևէ մեկը:

2. Հանձնաժողովի անդամը պարտավոր է ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի դառնալու պահից անհապաղ գրավոր կամ բանավոր Հանձնաժողով ինքնաբացարկ ներկայացնել՝ շարադրելով ինքնաբացարկի հիմք հանդիսացող հանգամանքները:

3. Հանձնաժողովի անդամը կարող է քննարկման առարկա դարձնել Հանձնաժողովի այլ անդամին բացարկ հայտնելու հարցը:

4. Հանձնաժողովի նիստը նախագահողը քննարկման է ներկայացնում ինքնաբացարկի կամ բացարկի հարցը, որը քննարկվում է Հանձնաժողովի՝ ինքնաբացարկ հայտնած կամ բացարկվող անդամի մասնակցությամբ:

5. Հարցի քննարկումից հետո Հանձնաժողովը կայացնում է որոշում: Հանձնաժողովի՝ ինքնաբացարկ հայտնած կամ բացարկվող անդամը, ինչպես նաև բացարկ հայտնած անդամը չեն մասնակցում ինքնաբացարկի կամ բացարկի հարցով քվեարկությանը:

6. Ինքնաբացարկի կամ բացարկի ընդունման դեպքում այդ անդամը չի մասնակցում այն հարցի քննությանը և քվեարկությանը, որի կապակցությամբ առկա է ինքնաբացարկի կամ բացարկի հիմք:

Հոդված 20. Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների ընդունման կարգը

1. Հանձնաժողովի նիստերում որոշումները և եզրակացություններն ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում նիստը նախագահողի ձայնը որոշիչ է:

2. Քվեարկությունից ձեռնպահ մնալը կամ ձայնի փոխանցումը մեկ այլ անդամի չի թույլատրվում:

3. Հանձնաժողովի որոշման կամ եզրակացության պատճառաբանական կամ եզրափակիչ մասի վերաբերյալ տարբերվող կարծիք ունենալու դեպքում Հանձնաժողովի անդամը մեկ օրվա ընթացքում ներկայացնում է գրավոր հատուկ կարծիք: Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքն ստորագրվում և կցվում է համապատասխան որոշմանը կամ եզրակացությանը:

4. Հանձնաժողովի ընդունած որոշումը և եզրակացությունը Հանձնաժողովի նախագահն ստորագրում է մեկ օրվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի:

5. Հանձնաժողովի ընդունած որոշումը կամ եզրակացությունը, որն ընդունվել է որոշակի դիտողությունների և առաջարկությունների ներկայացմամբ, դրանց համապատասխան լրամշակվում և Հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրվում է հինգ օրվա ընթացքում:

6. Հանձնաժողովի որոշումները կամ եզրակացությունները, մինչև սահմանված կարգով ընդունվելը, կարող են քննարկվել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ իրավաբանական անձանց որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձանց մասնակցությամբ: Շահագրգիռ կողմերի հետ Հանձնաժողովի որոշումները կամ եզրակացությունները քննարկելու կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 21. Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների ընդունման մասին իրազեկելը և ուժի մեջ մտնելը

1. Հանձնաժողովի որոշումները և եզրակացություններն ստորագրվելուց հետո՝ եռօրյա ժամկետում ուղարկվում են հասցեատիրոջը: Հանձնաժողովի որոշումները, եզրակացությունները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում, բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող հատվածների:

2. Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովի նախագահի ստորագրման պահից, եթե այդ որոշմամբ ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Հանձնաժողովի ընդունած վարչական ակտերը և

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Հանձնաժողովի եզրակացություններն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

4. Պետական տեղեկատվական համակարգի և կիբեռանվտանգության բնագավառի հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության կատարումը պարտադիր է: Եզրակացությամբ չառաջնորդվելը հիմք է հանդիսանում հանրային տեղեկություններին հասանելիությունը սահմանափակելու կամ հասանելիություն չտրամադրելու կամ օրենքով նախատեսված դեպքերում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար:

Հոդված 22. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական անձանց պարտականությունը Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են հինգ աշխատանքային օրվա ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ, եթե նշված տվյալները, նյութերը և տեղեկությունները պահանջելու մասին Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

2. Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ պահանջելիս Հանձնաժողովը տեղեկացնում է դրանք ներկայացնելու ժամկետների, ինչպես նաև սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տվյալներ, նյութեր և տեղեկություններ ներկայացնելու իրավական հետևանքների մասին:

3. Հիմնավոր միջնորդության հիման վրա սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել համապատասխանաբար՝ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ:

4. Հանձնաժողովը կարող է ստանալ և լիազորություններն իրականացնելիս օգտագործել պետական էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը:

Հոդված 23. Գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանումը

1. Առևտրային, պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները պահպանվում են օրենքով սահմանված կարգով:

2. Հանձնաժողովի նախագահը, անդամները, հանրային ծառայողները և աշխատողները չեն կարող հրապարակել կամ այլ կերպ տարածել ծառայողական օգտագործման համար նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև օգտագործել նման տեղեկությունները շահադիտական նպատակներով:

3. Սույն օրենքի իմաստով ծառայողական օգտագործման համար նախատեսված տեղեկություններ են համարվում նաև Հանձնաժողովի հանրային ծառայողներին և աշխատողներին իրենց ծառայողական (աշխատանքային) պարտականությունները կատարելու ընթացքում հայտնի դարձած տեղեկությունները, այդ թվում՝ Հանձնաժողովի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման ընթացքում կիբեռանվտանգության, տեղեկատվական համակարգերի անվտանգության գործիքների կիրառման, տեխնոլոգիական և ծրագրային լուծումների, ինչպես նաև վերահսկողության և հսկողության տվյալների վերաբերյալ, բացառությամբ՝ հրապարակված կամ այլ կերպ տարածված տեղեկությունների:

4. Հանձնաժողովը կարող է սահմանել ծառայողական օգտագործման համար նախատեսված տեղեկությունների ցանկ և պահպանության տարբեր աստիճաններ, ինչպես նաև դրանց օգտագործման կարգը:

5. Սույն հոդվածում նշված տեղեկությունների հրապարակման հետևանքով հասցված վնասը ենթակա է փոխհատուցման օրենքով սահմանված կարգով:

Հոդված 24. Հանձնաժողովի գործունեության կազմակերպումը

1. Հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները:

2. Հանձնաժողովի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է Հանձնաժողովը:

3. Հանձնաժողովի հաստիքացուցակը, կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունը, պաշտոնների, այդ թվում՝ հայեցողական պաշտոնների, քաղաքացիական աշխատանք և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը հաստատում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 25. Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը և բողոքարկումը

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված կարգավորումները:

2. Հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Հանձնաժողովի որոշումը, բացառությամբ տուգանք կիրառելու մասին որոշման (այսուհետ՝ հանրային իրավական դրամական պահանջ), ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան որոշման մեջ սահմանված ժամկետում կատարման, և դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

3. Այն դեպքում, երբ հանձնաժողովի որոշումը, բացի հանրային իրավական դրամական պահանջից, ներառում է նաև այլ կարգավորումներ, ապա սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունը կիրառվում է միայն հանրային իրավական դրամական պահանջի մասով:

Հոդված 26. Հանձնաժողովի ֆինանսավորումը

1. Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. Հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում Հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտը՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

3. Բյուջետային հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում անփոփոխ, իսկ առարկության դեպքում փոփոխված ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում: Պետական բյուջեի նախագծի հետ միասին Ազգային ժողով է ներկայացվում նաև Հանձնաժողովի հայտը:

Հոդված 27. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը

1. Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին: Հաղորդումը ներառում է նախորդ տարվա ընթացքում Հանձնաժողովի իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկություններ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է «Ազգային ժողովի

կանոնակարգ» սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ:

2. Հաղորդումը Ազգային ժողովում քննարկվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկությունների:

Գ Լ Ո Ւ Խ 4

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդված 28. Վերահսկողություն իրականացնելը

1. Օրենքով նախատեսված դեպքերում, օրենքով և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնում և բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի՝ պատասխանատվության միջոցներ կիրառում է Հանձնաժողովը՝ սույն օրենքով սահմանված կարգով համապատասխանության գնահատում իրականացնելու միջոցով:

2. Օրենքով նախատեսված համապատասխան գործառույթների առկայության դեպքում իրավաբանական անձի նկատմամբ սույն օրենքով և «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված վերահսկողությունն իրականացնում է կարգավորող և վերահսկող մարմինը: Սույն մասով իրականացվող վերահսկողությունից հետո մեկ ամսվա ընթացքում համապատասխան կարգավորող և վերահսկող մարմինը վերահսկողության արդյունքների մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:

3. Կիբեռանվտանգության ոլորտում օրենքով նախատեսված կարգավորող և վերահսկող այլ մարմին առկա չլինելու կամ կարգավորող և վերահսկող մարմնի կիբեռանվտանգության ապահովման ոլորտում գործառույթների իրականացման իրավական հիմքերի բացակայության դեպքում իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հանձնաժողովը՝ սույն օրենքով սահմանված կարգով:

4. Հանձնաժողովը իրավաբանական անձանց նկատմամբ օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ընթացքում համապատասխան կարգավորող և վերահսկող այլ

մարմինների հետ համագործակցությունն ապահովվում է սույն օրենքով սահմանված կարգով:

5. Համապատասխանության գնահատումն իրականացնում է Հանձնաժողովի կողմից ստեղծվող համապատասխանության գնահատում իրականացնելու համար լիազորված խումբը (այսուհետ՝ գնահատող խումբ):

6. Համապատասխանության գնահատումներն անցկացվում են Հանձնաժողովի որոշմամբ՝ Հանձնաժողովի տարածքում: Առանձին դեպքերում, Հանձնաժողովի որոշմամբ, գնահատող խմբի անդամները վերահսկվող անձի մոտ կարող են իրականացնել տեղեկատվական համակարգերի տեխնիկական և ֆիզիկական անվտանգության պահանջների համապատասխանության գնահատում: Սույն մասում նշված որոշման մեջ նշվում են վերահսկվող անձի անվանումը, համապատասխանության գնահատման նպատակը, ուղղությունները (ոլորտները), գնահատող խմբի կազմը, այդ թվում՝ ղեկավարը, համապատասխանության գնահատում անցկացնելու սկիզբը և ավարտը:

7. Սույն օրենքի հիման վրա համապատասխանության գնահատման արդյունքում կազմված հաշվետվություններում և եզրակացություններում (տեղեկանքներում) պարունակվող տեղեկությունները համարվում են ծառայողական օգտագործման համար տեղեկություններ, որոնք կարող են երրորդ անձանց տրամադրվել բացառապես օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

8. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում կարգավորող և վերահսկող մարմինը վերահսկողություն իրականացնում է օրենքներով և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ:

9. Հանձնաժողովը համապատասխանության գնահատում իրականացնելիս իրավունք ունի ստանալու այլ պետական մարմինների աջակցությունը:

10. Հանձնաժողովը կարող է համապատասխանության գնահատման ցանկացած փուլում առանձին հարցերի պարզաբանման նպատակով ներգրավել համապատասխան մասնագետների, փորձագետների:

11. Հանձնաժողովը կարգավորող և վերահսկող այլ մարմինների կողմից շահագործվող տեղեկատվական համակարգերի նկատմամբ վերահսկողություն իրականացնում է մշտադիտարկման միջոցով՝ նշված մարմիններից ստացված, օրենքով սահմանված աուդիտի արդյունքների հիման վրա:

12. Սույն հոդվածը չի տարածվում Հանձնաժողովի կողմից կնքված պայմանագրերի պայմանների պահպանման նկատմամբ իրականացվող

ստուգումների դեպքերի վրա: Պայմանագրերի պայմանների նկատմամբ իրականացվող ստուգումների կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 29. Համապատասխանության գնահատման պայմանները

1. Համապատասխանության գնահատումներն անցկացվում են վերահսկվող անձի տեղեկատվական համակարգերին հասանելիություն ապահովելու միջոցով և տեղեկատվական համակարգերի ու կիբեռանվտանգության ապահովման պահանջներին վերաբերող տվյալների, նյութերի և տեղեկությունների, դրանցում կատարված փոփոխությունների, վերաբերող պայմանագրերի (ակտերի, արձանագրությունների և այլ փաստաթղթերի), տեխնիկական առաջադրանքների, անկախ աուդիտորական եզրակացությունների ուսումնասիրության և վերլուծության միջոցով:

2. Համապատասխանության գնահատման ընթացքում, առանց գնահատող խմբի ղեկավարի թույլտվության, կողմնակի անձանց մուտքը գնահատող խմբի աշխատանքային տարածք արգելվում է:

3. Համապատասխանության գնահատում իրականացնելիս կարող են կիրառվել համակարգչային տեխնոլոգիաներ և այլ տեխնիկական կամ ծրագրային միջոցներ, էլեկտրոնային և այլ սարքավորումներ, կրիչներ, թվային տիրույթում կատարվել գործողություններ՝ ուղղված համապատասխանության գնահատման իրականացմանն ու արդյունքների ամփոփմանը:

Հոդված 30. Վերահսկվող անձի պարտականությունները

1. Վերահսկվող անձը պարտավոր է՝

1) ապահովել տեղեկատվական համակարգերին և կիբեռանվտանգության ապահովման պահանջներին վերաբերող տվյալների, նյութերի և այլ տեղեկությունների, դրանցում կատարված փոփոխությունների, վերաբերող պայմանագրերի (ակտերի, արձանագրությունների և այլն), տեխնիկական առաջադրանքների, անկախ աուդիտորական եզրակացությունների տրամադրումը գնահատող խմբին, ինչպես նաև ապահովել գնահատող խմբի հասանելիությունը տեղեկատվական համակարգերին, էլեկտրոնային ծրագրերին՝ անկախ այն հանգամանքից դրանք պարունակում են առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ կամ անձնական տվյալներ, թե ոչ.

2) կատարել գնահատող խմբի ղեկավարի օրինական պահանջները, ինչպես նաև գնահատող խմբի ղեկավարին և անդամներին ներկայացնել գրավոր և

բանավոր բացատրություններ, տեղեկություններ և պարզաբանումներ համապատասխանության գնահատման ենթակա հարցերի վերաբերյալ:

2. Արգելվում է համապատասխանության գնահատման ընթացքում խոչընդոտել կամ միջամտել գնահատող խմբի անդամների օրինական գործողություններին: Գնահատող խմբի անդամները, հրավերի առկայության դեպքում, կարող են մասնակցել վերահսկվող իրավաբանական անձի կառավարման մարմինների նիստերին, ժողովներին և քննարկումներին, ներկայացնել համապատասխանության գնահատման արդյունքները, հնարավոր հետևանքները:

Հոդված 31. Գնահատող խմբի իրավունքները և պարտականությունները: Հանձնաժողովի պատասխանատվությունը

1. Գնահատող խումբը համապատասխանության գնահատում իրականացնելու նպատակով իրավասու է՝

1) վերահսկվող անձից, նրա ղեկավարներից և իրավասու աշխատողներից պահանջել համապատասխանության գնահատման ենթակա տեղեկատվական համակարգերին, էլեկտրոնային ծրագրերին հասանելիություն, տվյալներ, նյութեր և տեղեկություններ.

2) վերահսկվող անձի ղեկավարությանը և իրավասու աշխատողներին իրենց իրավասության սահմաններում ներկայացնել հիմնավոր այլ պահանջներ, եթե դրանք բխում են համապատասխանության գնահատման անհրաժեշտությունից և նպատակից:

2. Գնահատող խումբը պարտավոր է համապատասխանության գնահատումն իրականացնել սույն օրենքով և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերով սահմանված կարգով: Գնահատող խումբը պարտավոր է աշխատանքների ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխանության գնահատման վերաբերյալ հաշվետվությունը, եզրակացությունը (տեղեկանքները) ներկայացնել Հանձնաժողովի նախագահին:

3. Հանձնաժողովը պատասխանատվություն է կրում գնահատող խմբի անդամներին ժամանակավորապես տրամադրված տվյալների, նյութերի և տեղեկությունների պահպանության, ապահովության և վերադարձելիության համար:

Հոդված 32. Համապատասխանության գնահատման ուղղությունները (ոլորտները) և ամփոփումը

1. Հանձնաժողովը կարող է համապատասխանության գնահատում իրականացնել հետևյալ ուղղություններով (ոլորտներով)՝

1) օրենքով նախատեսված կարգով տեղեկատվական համակարգերի և պետական տեղեկատվական համակարգի անվտանգության ապահովման գնահատում.

2) օրենքի պահանջներին պաշտոնական կայքերի կամ դրանց բջջային հավելվածների գնահատում.

3) տեղեկությունների և տվյալների օրենքով սահմանված կարգով օգտագործման և պահպանության գնահատում.

4) տեղեկատվական մուտքի հարթակի, տվյալների փոխանակման շերտի օգտագործման, տվյալների շտեմարանների ստեղծման, ներդրման, կառավարման, շահագործման, օգտագործման, պահպանման, վերակազմավորման և դադարեցման գնահատում.

5) տվյալների կառավարման, ամպային տիրույթում տեղակայման, տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցների կիրառման և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների գնահատում.

6) կիբեռհարձակման կամ կիբեռմիջադեպերի պատճառների ու հետևանքների գնահատում, ձեռնարկված միջոցառումների օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների գնահատում.

7) որակավորված աուդիտորի կողմից կիբեռանվտանգության աուդիտի արդյունքներով կազմված հաշվետվության պահանջների կատարման կամ բացահայտված թերությունների վերացման գնահատում:

2. Համապատասխանության գնահատման ընթացքում կարող է կատարվել վերլուծություն և գնահատում՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր ուղղություններով (ոլորտներով) կամ դրանց մի մասով:

3. Հանձնաժողովի նախագահն իրավասու է, մինչև համապատասխանության գնահատումը սկսելը, վերահսկվող անձից պահանջել Հանձնաժողով ներկայացնել համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ տվյալները, նյութերը և տեղեկությունները: Այդ դեպքում վերահսկվող անձը պարտավոր է Հանձնաժողովի նախագահի գրավոր պահանջը կատարել հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե գրությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

4. Համապատասխանության գնահատման ավարտից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վերահսկվող անձի ղեկավարների, գնահատող խմբի անդամների և Հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված այլ մասնակիցների մասնակցությամբ անցկացվում է համապատասխանության գնահատման արդյունքների քննարկում: Քննարկումը կազմակերպում, մասնակիցների ցանկը

Հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցնում և հրավերները փոխանցում է գնահատող խմբի ղեկավարը:

5. Հանձնաժողովի գրավոր պահանջով վերահսկվող անձը պարտավոր է ապահովել համապատասխանության գնահատման արդյունքների ներկայացումը կազմակերպության մասնակիցներին, ինչպես նաև վերջիններիս կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությունն համապատասխանության գնահատման արդյունքների քննարկմանը: Նշված անձանց բացակայությունը հիմք չէ քննարկումը չիրականացնելու համար: Քննարկմանը կարող են հրավիրվել նաև տվյալ կազմակերպությունում աուդիտ անցկացրած անկախ աուդիտորական կազմակերպության ներկայացուցիչները: Քննարկման արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

6. Քննարկման արդյունքների հիման վրա, Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված ժամկետում, գնահատող խումբը կազմում է համապատասխանության գնահատման հաշվետվություն:

7. Հաշվետվությունը կազմվում է երկու օրինակից, որոնք ստորագրում են գնահատող խմբի անդամները: Հաշվետվության մեկ օրինակը փոխանցվում է վերահսկվող անձի ղեկավարությանը:

8. Վերահսկվող անձի գործադիր մարմինը կամ նրա նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցն իրավունք ունեն հաշվետվության վերաբերյալ ներկայացնել իրենց գրավոր առարկություններն ու բացատրությունները՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 33. Խախտման արձանագրումը

1. Սույն օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող խումբը Օրենքների, Հանձնաժողովի որոշումների և իրավական այլ ակտերի պահանջների խախտումներն արձանագրում է արձանագրություն (այսուհետ՝ արձանագրություն) կազմելու միջոցով: Արձանագրությունը ստորագրում են գնահատող խմբի բոլոր անդամները: Արձանագրությունը գնահատող խմբի բոլոր անդամների կողմից ստորագրվելու պահից խախտումը համարվում է սույն օրենքով սահմանված կարգով արձանագրված: Խախտումն արձանագրելու պահից սկսվում է պատասխանատվության միջոցի կիրառման վարույթը (այսուհետ՝ վարույթ), որն իրականացվում է սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված կարգավորումները:

2. Արձանագրության մեջ մանրամասնորեն նկարագրվում է խախտումը և նշվում է օրենքի, հանձնաժողովի որոշման կամ իրավական այլ ակտի նորմը, որը խախտվել է, ինչպես նաև պատասխանատվության միջոցը, որը ենթակա է կիրառման:

3. Արձանագրությունը կազմելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում այն գրությամբ ուղարկվում է խախտումը թույլ տված անձի գործադիր մարմնի ղեկավարին:

4. Արձանագրությունը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում վերահսկվող անձը ստորագրում է արձանագրությունը և առձեռն հանձնում Հանձնաժողով: Արձանագրությանը կից կարող է ներկայացվել ստորագրված գրավոր բացատրություններ կամ պարզաբանումներ:

Հոդված 34. Պատասխանատվության միջոցի կիրառման հիմքերը և պատասխանատվության միջոցները

1. Հանձնաժողովը համապատասխանության գնահատման արձանագրության հիման վրա կիրառում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, եթե խախտվել են Օրենքների, Հանձնաժողովի որոշումների և իրավական այլ ակտերի պահանջները:

Հոդված 35. Համապատասխանության գնահատմանը խոչընդոտելը

1. Հանձնաժողովին վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարման խոչընդոտում է համարվում վերահսկվող անձի կամ անձի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կամ նրա աշխատակցի կամ այլ ներկայացուցչի կողմից սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ տվյալներ, նյութեր կամ տեղեկություններ չներկայացնելը կամ տեղեկատվական համակարգին հասանելիություն չապահովելը կամ այլ կերպ համապատասխանության գնահատմանը խոչընդոտելը, որն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 36. Հանձնաժողովի կողմից մշտադիտարկում իրականացնելը

1. Պետական տեղեկատվական համակարգի անխափան գործունեությունն ու անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև այլ հնարավոր խոցելիություններից պաշտպանելու նպատակով Հանձնաժողովը կարող է իրականացնել մշտադիտարկում՝ Հանձնաժողովի տարածքում: Մշտադիտարկման ընթացքում

իրականացվում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով և Հանձնաժողովի որոշումներով ու եզրակացություններով սահմանված պահանջների ապահովման վերլուծություն: Տեղեկատվական համակարգի կառավարչի համաձայնությամբ մշտադիտարկում կարող է իրականացվել իր տարածքում: Տարեկան մշտադիտարկումների ծրագիրը հաստատում է Հանձնաժողովը:

2. Մշտադիտարկում է համարվում օրենքով նախատեսված պետական տեղեկատվական համակարգերի, փոխանակման շերտի, ինչպես նաև իրավաբանական անձի տիրույթում Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան կարգաբերված և փոխանակման շերտի մաս կազմող սարքերի, սարքավորումների և ծրագրային ապահովման միջոցների նկատմամբ որոշակի պարբերականությամբ իրականացվող դիտարկումը:

3. Մշտադիտարկում իրականացնելիս կարող են կիրառվել համակարգչային տեխնոլոգիաներ և այլ տեխնիկական կամ ծրագրային միջոցներ, էլեկտրոնային և այլ սարքավորումներ, կրիչներ, կատարվել այլ գործողություններ՝ ուղղված մշտադիտարկման իրականացմանն ու արդյունքների ամփոփմանը:

4. Մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա: Հրամանում նշվում են մշտադիտարկման ենթակա հարցերը, մշտադիտարկման ժամանակահատվածը, պարբերականությունը, մշտադիտարկում իրականացնող անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը): Մշտադիտարկման ներքին ընթացակարգը, արդյունքների ամփոփման և ներկայացման կարգը հաստատում է Հանձնաժողովը:

5. Հանձնաժողովը պարտավոր չէ մշտադիտարկում իրականացնելու մասին տեղեկացնել մշտադիտարկման ենթակա տեղեկատվական համակարգի կառավարչին, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տեղեկատվական համակարգի կառավարչի համաձայնությամբ մշտադիտարկում իրականացնելու դեպքի:

6. Մշտադիտարկման արդյունքների հիման վրա պատասխանատվության միջոցներ չեն կարող կիրառվել:

7. Մշտադիտարկման արդյունքում Հանձնաժողովը՝ եզրակացությամբ կամ Հանձնաժողովի նախագահը՝ գրությամբ, կարող են պահանջել ապահովել սույն օրենքի, այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և Հանձնաժողովի որոշումների ու եզրակացությունների կիրառումը կամ վերացնել կամ կանխել դրանց խախտումները կամ նվազեցնել ռիսկերը, եթե գտնում է, որ.

1) բացահայտման ենթակա տեղեկությունը սահմանված կարգով չի բացահայտվել կամ սահմանված կարգով չի ապահովվել պաշտոնական վեբ-կայքի պահպանումն ու սպասարկումը.

2) օրենքով սահմանված կարգի խախտմամբ հասանելիություն է տրվել կամ բացահայտվել է տեղեկություն.

3) չի ապահովվել սույն օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրերով սահմանված՝ տեղեկատվական հարթակի, տվյալների շտեմարանների ստեղծման, ներդրման, կառավարման, շահագործման, օգտագործման, պահպանման, վերակազմավորման և դադարեցման պահանջները կամ պայմանները.

4) չի ապահովվել տվյալների կառավարման, ամպային տիրույթում տեղակայման, տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցների կիրառման և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի սույն օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրերով սահմանված պահանջները կամ պայմանները:

8. Հանձնաժողովն իրավունք ունի սույն հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելուն զուգահեռ սահմանափակել նաև տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման հանարավորությունը՝ մինչև Հանձնաժողովի եզրակացության կատարումը, եթե ունի հիմնավոր կասկածներ, որ նշված սահմանափակումը չկիրառելը կարող է խափանել պետական տեղեկատվական համակարգի անվտանգ և անխափան աշխատանքը:

9.Տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման սահմանափակումը վերացնում է Հանձնաժողովը, եթե ապահովվել է սույն օրենքի, այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և Հանձնաժողովի որոշումների ու եզրակացությունների կիրառումը կամ վերացվել կամ կանխվել են դրանց խախտումները կամ նվազեցվել են ռիսկերը: Տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման սահմանափակումը վերացնելու կարգը հաստատում է Հանձնաժողովը:

10. Համապատասխան մարմինը կամ իրավաբանական անձը պարտավոր է սույն հոդվածով նախատեսված եզրակացությունը կամ գրությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում միջոցներ ձեռնարկել դրանցով ներկայացված

օրինական պահանջները կատարելու ուղղությամբ և այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովի նախագահին:

11. Կիբեռանվտանգության ապահովման բնագավառում Հանձնաժողովը մշտադիտարկումներ իրականացնում է «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Հոդված 37. Հանձնաժողովի օրինական պահանջները չկատարելու հետևանքները

1. Եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ օրենքով նախատեսված դեպքերում նաև իրավաբանական անձը չի կատարում Հանձնաժողովի օրինական պահանջները, ապա Հանձնաժողովը.

1) դիմում է տվյալ մարմնի վերադաս մարմնին կամ համապատասխան պաշտոնատար անձին՝ պարտականությունների կատարման մեջ թերացած անձի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու գործընթաց սկսելու համար.

2) սույն օրենքով սահմանված կարգով նախաձեռնում է համապատասխանության գնահատում սկսելու գործընթաց.

3) սահմանափակում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման հանարավորությունը՝ մինչև Հանձնաժողովի օրինական պահանջների կատարումը, եթե ունի հիմնավոր կասկածներ, որ նշված սահմանափակումը չկիրառելը կարող է խափանել պետական տեղեկատվական համակարգի անվտանգ և անխափան աշխատանքը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հետևանքը կարող է կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ 1-ին կամ 2-րդ կետերի հետ միաժամանակ:

3. Կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու իրավունք ունեցող պաշտոնատար անձը պարտավոր է դիմումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում ձեռնարկել միջոցներ և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

4. Տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտին հասանելիությունը վերակագնելու կարգը սահմանում է Հանձնաժողովը:

ԳԼՈՒԽ 5

ՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԵՎ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 38. Պետական տեղեկատվական համակարգին և կիբեռանվտանգությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացության հիմքերը

1. Հանձնաժողովը եզրակացություններ ընդունում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Օրենքով նախատեսված դեպքերում եզրակացություն ստանալու նպատակով Հանձնաժողով դիմելու իրավունք ունեն պետական, տեղական ինքնակառավարման մարմինները և իրավաբանական անձինք:

3. Եզրակացություն ստանալու նպատակով Հաձնաժողով դիմելու կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 39. Եզրակացություն տալու կարգը

1. Պետական տեղեկատվական համակարգի և կիբեռանվտանգության բնագավառի հարցերի վերաբերյալ եզրակացություն Հանձնաժողովը տրամադրում է պետական, տեղական ինքնակառավարման մարմնի կամ իրավաբանական անձի դիմումն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ եզրակացություն տալու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև տասնհինգ աշխատանքային օրով:

3. Նախքան եզրակացության ընդունումը Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կարող է դիմել դիմումատուին՝ եզրակացության ընդունման համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու պահանջով, ինչպես նաև ստանալ քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, դիմումատուին կամ նրա պաշտոնատար անձանց հրավիրել Հանձնաժողովի նիստի կամ քննարկման:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունների բացակայության դեպքում Հանձնաժողովը եզրակացություն ընդունում է այդ տեղեկությունների բացակայությամբ՝ նշելով դրա նշանակությունը և ազդեցությունը քննարկվող հարցի վերաբերյալ:

Գ Լ Ո Ւ Խ 6

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 40. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության իրավական հիմքերը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարագիր), որը հաստատում է գլխավոր քարտուղարը: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անձնագրերի չափանիշները հաստատում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 41. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների պաշտոնների համակարգը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները դասակարգվում են երեք խմբերի, որոնցից յուրաքանչյուրը դասակարգվում է երեք ենթախմբերի:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անվանումները, խմբերը և ենթախմբերը սահմանում է

Հանձնաժողովը՝ որի համար սույն օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասում նշված որակավորումները կրում են կողմնորոշիչ բնույթ:

Հոդված 42. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պաշտոն զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին.

1) պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն, բացառությամբ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների ամենաբարձր խմբի ամենաբարձր ենթախմբի պաշտոնների, որոնք զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն.

2) պետք է տիրապետի հայերենին.

3) պետք է բավարարի տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող՝ պահանջներին և առկա չլինի պաշտոնի նշանակման համար օրենքով սահմանված սահմանափակումները.

4) պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքերում պետք է ունենա պահանջվող գիտելիքները ու կոմպետենցիաները հիմնավորող փաստաթուղթ (օրինակ՝ որակավորում, սերտիֆիկատ և այլն):

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից.

4) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

5) որի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի հարուցվել ոչ արդարացնող հիմքով.

6) որն ունի Կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացումը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ.

7) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Հոդված 43. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի նշանակելու պայմանները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում ծառայողների՝ գործառույթից կախված որակավորման պահանջները սահմանում է Հանձնաժողովը, որի համար Միջազգային հավատարմագրման ֆորումի բազմակողմ ճանաչման համաձայնագրին միացած ազգային հավատարմագրման մարմինների կողմից ISO/IEC 17024 ստանդարտով հավատարմագրված հավաստագրման մարմինների կողմից տրված որակավորումները կրում են կողմնորոշիչ բնույթ:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոնի նշանակման պայմանները հաստատում է Հանձնաժողովը:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները համալրվում են կա՛մ մրցութային կարգով, կա՛մ փոխադրման կարգով , կա՛մ կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգով: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները մրցութային կարգով համալրելու կարգը և պայմանները սահմանում է Հանձնաժողովը:

4. Եթե տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության թափուր պաշտոնը չի զբաղեցվում փոխադրման կարգով կամ կադրերի ռեզերվից կամ սույն օրենքով նախատեսված մրցութային կարգով, ապա կարող է զբաղեցվել ժամկետային աշխատանքային պայմանագրով: Սույն մասով սահմանված պայմանագիրը կնքվում է առավելագույնը վեց ամիս ժամկետով և այն անձի հետ, որը բավարարում է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

5. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման նպատակով Հանձնաժողովի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը կարող է առաջարկություն ներկայացնել Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայության կադրերի ռեզերվում գտնվող ծառայողին թափուր պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ, եթե նա բավարարում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

Հոդված 44. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում սկսնակ մասնագետի ներգրավումը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում որպես սկսնակ մասնագետ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով կարող է ներգրավվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, և, բացի սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նախատեսված՝ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները հիմնավորող փաստաթուղթ ունենալու պահանջից, սույն օրենքով սահմանված մյուս պահանջները բավարարող անձը:

2. Սկսնակ մասնագետները Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի սահմանած կարգով անցնում են սկսնակ մասնագետների համար նախատեսված վերապատրաստման դասընթացներ: Սույն մասում նշված վերապատրաստման դասընթացներն անցնելու արդյունքների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրվում է համապատասխան փաստաթուղթ:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում սկսնակ մասնագետները համարվում են քաղաքացիական աշխատանք կատարողներ: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում սկսնակ մասնագետների աշխատանքի ժամանակահատվածը համարվում է հանրային ծառայության ստաժ:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում որպես սկսնակ մասնագետ ներգրավվելու կարգը սահմանում է Հանձնաժողովը:

Հոդված 45. Հանձնաժողովում պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանձնաժողովի նախագահը:

2. Հանձնաժողովի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

3.Հանձնաժողովի տեխնիկական սպասարկում և քաղաքացիական աշխատանք իրականացնող անձանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի գլխավոր քարտուղարը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Հանձնաժողովում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 46. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման և փոխադրման կարգով

1. Հանձնաժողովի նախագահը մինչև երկու տարի ժամկետով կարող է տեղափոխություն կատարել հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր պաշտոն զբաղեցնող ծառայողների միջև, եթե վերջիններս բավարարում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահը կարող է նույն կամ այլ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ծառայողին փոխադրել թափուր պաշտոնի, եթե նա բավարարում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

3. Փոխադրումից հետո թափուր մնացած պաշտոնը կարող է զբաղեցվել սույն օրենքով նախատեսված մրցույթով կամ կադրերի ռեզերվից:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչև սահմանված հիմքի վերացումը Հանձնաժողովի նախագահը կարող է այլ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ծառայողին փոխադրել այդ պաշտոնին, եթե նա բավարարում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին ժամանակավոր թափուր պաշտոնի փոխադրման դեպքում նրա պարտականությունները կատարում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող ծառայողը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամանակավոր թափուր պաշտոնն առաջանում է՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքում.

2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

4) Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.

5) եռամսյա ժամկետը գերազանցող վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու դեպքում:

6. Տեղափոխությունը, փոխադրումն իրականացվում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի համաձայնությամբ:

7. Տեղափոխության և փոխադրման դեպքերում Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

8. Տեղափոխության և փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները, ինչպես նաև տեղափոխության և փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու ժամանակ անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է Հանձնաժողովը:

9. Սույն հոդվածի իմաստով հավասարազոր պաշտոն է համարվում Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անվանացանկում Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված պաշտոնը:

Հոդված 47. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի առաջխաղացումն առանց մրցույթի

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի (բացառությամբ կադրերի ռեզերվում գտնվող անձանց) առաջխաղացումն առանց մրցույթի իրականացվում է համապատասխան պաշտոնի առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման գործընթացի արդյունքների հիման վրա:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայողի առաջխաղացման նպատակով կատարողականի գնահատման գործընթացի կազմակերպման արդյունքների ամփոփման կարգը և ձևաչափը սահմանում է Հանձնաժողովը:

Հոդված 48. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 49. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պաշտոնից ազատվելը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը պաշտոնից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) հաստիքների կրճատման դեպքում, եթե Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

4) Կառավարության հաստատած հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալու դեպքում.

5) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած ճանաչելու կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

7) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

8) նրա նկատմամբ սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը նշանակելու դեպքում.

9) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդը.

10) սույն օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկն ի հայտ գալու դեպքում.

11) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան կամ պաշտոնից ազատման դեպքում:

Հոդված 50. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի իրավունքները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողն իրավունք ունի՝

1) ծանոթանալու իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեությանը վերաբերող փաստաթղթերին.

2) իր իրավասության սահմաններում քննարկելու հարցեր և ընդունելու որոշումներ.

3) աշխատանքի համար ստանալ համարժեք վարձատրություն.

4) սահմանված կարգով մասնակցելու ծառայողական առաջխաղացմանը.

5) մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար սահմանված կարգով մասնակցել վերապատրաստումների՝ պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին.

6) ներկայացնելու առաջարկություններ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի գործունեության կատարելագործման վերաբերյալ.

7) օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Հոդված 51. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պարտականությունները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը պարտավոր է՝

1) տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.

4) պահպանել ծառայողական կարգապահությունը.

5) պահպանել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկատվության օգտագործման համար սահմանված պահանջները, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո.

6) պահպանել օրենքով սահմանված սահմանափակումներն ու անհամատեղելիության պահանջները:

Հոդված 52. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու և առանձնակի ցուցանիշների համար Հանձնաժողովի սահմանած կարգով Տեղեկատվական

համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի տասնօրյա արձակուրդի տրամադրում:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ Հանձնաժողովի սահմանած կարգով որպես խրախուսանք կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժի հանումը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով սահմանված խրախուսման միջոցները կիրառում է Հանձնաժողովի նախագահը:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսման միջոցը կիրառում է կարգապահական տույժ նշանակած պաշտոնատար անձը:

Հոդված 53. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) սահմանված վարքագծի կանոնները խախտելը.

2) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

3) ներքին կարգապահական կանոնները խախտելը.

4) օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:

Հոդված 54. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) զգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնից ազատում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Հոդված 55. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից չի անցել վեց ամսից ավելի՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը, ընդ որում՝ նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին:

2. Տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

3. Կարգապահական տույժի մասին Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ երկօրյա ժամկետում:

4. Եթե կարգապահական տույժ նշանակվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա այն համարվում է մարված: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի վրա:

5. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա: Ծառայողական քննության նշանակման և անցկացման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

6. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարան:

Հոդված 56. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին ավելի ցածր պաշտոնի փոխադրելը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին չի կարելի ավելի ցածր պաշտոնի փոխադրել, բացառությամբ հետևյալ դեպքերի, երբ՝

1) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի դիմումի հիման վրա.

2) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը նշանակելիս.

3) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է հաստիքները կրճատվելիս՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի համաձայնությամբ:

Հոդված 57. Հանձնաժողովում ծառայության առանձնահատկությունները

1. Հանձնաժողովի անդամները և աշխատողներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո չեն կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել իրականացրած վարչական վարույթի հետ կապված, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում թույլ տված չարաշահումների քննության դեպքի:

2. Հանձնաժողովի անդամները և աշխատողները չեն կարող ենթարկվել գույքային, վարչական պատասխանատվության օրենքով նախատեսված իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար:

Հոդված 58. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի և անդամների արձակուրդը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներն ունեն ամենամյա նվազագույն 20 աշխատանքային օր և ամենամյա լրացուցիչ 4 աշխատանքային օր տևողություններով վճարովի արձակուրդների իրավունք:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի անդամներին արձակուրդ տրամադրում է Հանձնաժողովի նախագահը կամ օրենքով սահմանված դեպքերում նրան փոխարինող անձը:

Հոդված 59. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության կադրերի ռեզերվը և ծառայողի անձնական գործը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության կադրերի ռեզերվը (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) վարում է Հանձնաժողովի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

2. Կադրերի ռեզերվում, իրենց դիմումի համաձայն, գրանցվում են սույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատված ծառայողները, բացառությամբ ժամկետային

աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների:

3. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու մեկանգամյա առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված ծառայողի 65 տարին լրանալը: Ծառայողը իր դիմումի համաձայն կարող է հանվել կադրերի ռեզերվից վաղաժամկետ:

4. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը համարվում է հանրային ծառայության ստաժ: Ծառայողը կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում չի վճարվում:

5. Կադրերի ռեզերվում գրանցվելու դեպքում ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում: Այս դեպքում ծառայողի հետ վերջնահաշվարկը կատարվում է կադրերի ռեզերվում լինելու առավելագույն ժամկետը լրանալուց կամ իր դիմումի համաձայն կադրերի ռեզերվից վաղաժամկետ հանվելուց հետո:

6. Եթե ծառայողը սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է սույն օրենքով նախատեսված ծառայության պաշտոն Հանձնաժողովում, ապա կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում:

7. Ծառայողը հանվում է կադրերի ռեզերվից հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու կամ այլ աշխատանքի անցնելու դեպքում:

8. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակ ծառայողը չունի արձակուրդի իրավունք, և վերջնահաշվարկի մեջ ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը չի հաշվարկվում:

9. Ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու, կադրերի ռեզերվից հանելու, և կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

10. Ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում: Անձնական գործերի վարման կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Գ Լ Ո Ւ Խ 7
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 60. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված 61. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից Հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են թափուր և սույն օրենքով նախատեսված մարմինները կարող են մեկնարկել Հանձնաժողովի անդամի թեկնածուների առաջադրման և նշանակման գործընթացը:

2.Հանձնաժողովի առաջին կազմի անդամների թեկնածությունների առաջադրումը սույն օրենքով նախատեսված մարմիններն իրականացնում են սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի մեկնարկից երկու ամսվա ընթացքում: Հանձնաժողովի անդամների առաջին կազմի նշանակումն Ազգային ժողովն իրականացնում է սույն օրենքով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Հանձնաժողովի առաջին կազմի անդամների պաշտոնավարման ժամկետներն են՝

1) երկու անդամի համար՝ երկու տարի.

2) մեկ անդամի համար՝ երեք տարի.

3) մեկ անդամի համար՝ չորս տարի.

4) Հանձնաժողովի նախագահի համար՝ հինգ տարի:

4. Հանձնաժողովի առաջին կազմի անդամները երկրորդ անգամ Հանձնաժողովի անդամ կարող են նշանակվել ընդհանուր հիմունքներով, հինգ տարի ժամկետով և համարվում են մեկ ամբողջական ժամկետ պաշտոնավարած:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամկետով Հանձնաժողովի առաջին կազմի երկու անդամներին առաջարկում են համապատասխանաբար Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը, իսկ իսկ 2-3-րդ կետերով սահմանված ժամկետները Հանձնաժողովի առաջին կազմի երկու անդամներից ամեն մեկի համար առաջարկում է Կառավարությունը՝ առաջադրման հետ միաժամանակ:

6. Հանձնաժողովի առաջին կազմի աշխատանքների կազմակերպման համար տվյալ տարվա պետական բյուջեից ֆինանսական միջոցների հատկացման մասին Կառավարության որոշումը մշակում և Կառավարության հաստատման է ներկայացնում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

7. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար աշխատավայր և աշխատանքային պատշաճ պայմաններ ապահովելու համար Հայաստանի Հանրապետության բարձր

տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը առաջարկություն է ներկայացնում վարչապետի աշխատակազմ:

8. Հանձնաժողովը համարվում է ձևավորված, եթե Ազգային ժողովի կողմից նշանակվել են Հանձնաժողովի առնվազն չորս անդամ: Հանձնաժողովն իր կազմավորումից հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատում է իր կանոնադրությունը և կառուցվածքը:

9. Հանձնաժողովի նախագահը պաշտոնի նշանակվելուց հետո՝

1) տասնօրյա ժամկետում հաստատում է Հանձնաժողովի ձևավորման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ հաստիքների ժամանակավոր թվաքանակ, բայց ոչ ավել քան 30 հաստիք, որի մեջ ներառվում է նաև գլխավոր քարտուղարի հաստիքը:

2) Սույն մասի 1-ին կետում նշված հաստիքների հաստատումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարի հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով մինչև տվյալ պաշտոնի համար անցկացվող մրցույթի արդյունքով նշանակում կատարելը՝ այլ ինքնավար մարմնի գլխավոր քարտուղարի համար սահմանված պահանջների հաշվառմամբ.

3) Սույն մասի 1-ին կետում նշված հաստիքների հաստատումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորում է փորձագիտական խմբեր՝ անձնակազմի կառավարման, իրավական ապահովման և կազմակերպաֆինանսական: Փորձագիտական խմբերի համար սահմանում է գործողությունների ժամանակացույց.

4) ապահովում է Հանձնաժողովի հաշվառումն իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնում՝ Հանձնաժողովի կանոնադրությունը հաստատվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

10. Սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով սահմանված փորձագիտական խմբերում նախատեսված պաշտոնները համալրվում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքելու միջոցով: Պայմանագրերը կնքում է գլխավոր քարտուղարը: Տվյալ անձանց վարձատրությունը սահմանվում է քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների երկրորդ ենթախմբին համապատասխանող սանդղակի առաջին մակարդակի հիմնական աշխատավարձի չափով:

11. Հանձնաժողովի կառուցվածքի, պաշտոնների անվանացանկի և հաստիքացուցակի հաստատումից հետո մինչև հաստիքների օրենքով սահմանված կարգով համալրումը Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության հաստիքները

զբաղեցվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով, իսկ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության հաստիքները զբաղեցվում են սույն օրենքով սահմանված ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով:

12. Սույն օրենքից բխող իրավական ակտերը համապատասխան մարմիններն ընդունում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

13. Հանձնաժողովը սույն օրենքի ընդունման պահից հետո 1 տարվա ընթացքում մշակում, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջոցով շրջանառության մեջ է դնում սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման արդյունքում պետական բյուջե մուծվող պետական տուրքերի կամ այլ պարտադիր վճարների գանձման դեպքերի, կարգի և չափերի կարգավորման մասին օրենսդրական ակտերի փաթեթ:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Կ-1139[2]-20.08.2025-ՊԻ-011/1 Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի, ի դեմս՝ տեղեկատվական համակարգերի կարգավորման

հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմավորման և գործունեության կարգը, կարգավիճակը, անդամներին ներկայացվող պահանջները, անկախության երաշխիքները, տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության հետ կապված հարաբերությունները, իրավասությունների, վերահսկողության շրջանակը և լիազորությունները:

Հոդված 2. Հանձնաժողովի կարգավիճակը և իրավասությունների շրջանակը

1. Հանձնաժողովն ինքնավար մարմին է, որն ապահովում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրությամբ իր իրավասության ներքո գտնվող խնդիրների իրականացումը, կազմակերպում է տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցառումների համակարգի մշակման աշխատանքները և համակարգում է տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցառումների իրականացումը:

2. Հանձնաժողովը կազմակերպում է.

1) ազգային նույնականացման շերտի, այդ թվում՝ անձի էլեկտրոնային նույնականացման, թվային ստորագրության ու գաղտնագրման ծրագրային ապահովումների համակարգի, տեղեկատվական մուտքի հարթակի (hartak.am), «Ես եմ» նույնականացման հարթակի մշակումը, կառավարումը, զարգացումը, հոսթինգը և օգտագործումը.

2) թվային ճարտարապետության, այդ թվում՝ պետական տեղեկատվական համակարգի տեղեկություններին թվային անվտանգ միջավայրում հասանելիության, կառավարական ցանցի, տվյալների փոխանակման և այլ շերտերի, պետական տեղեկատվական համակարգի կառավարման համակարգի, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջգերատեսչական համակարգի մշակումը, կառավարումը, զարգացումը, հոսթինգը և օգտագործումը, միջազգային պայմանագրերի հիման վրա դրանց ինտեգրումն այլ տեղեկատվական համակարգերի:

Հոդված~~ՈՂՎԱԾ~~ 3. Համագործակցությունը

1. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների պետական մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ, կարող է կնքել հուշագրեր և իրավաբանական պարտադիր ուժ չունեցող միջազգային բնույթի այլ փաստաթղթեր:

2. Հանձնաժողովն օրենսդրությամբ նախատեսված գործառույթները «Կիբեռանվտանգության մասին» օրենքով նախատեսված կարգավորող և վերահսկող այլ մարմինների կողմից կարգավորվող և վերահսկվող անձանց նկատմամբ իրականացնում է այդ մարմինների հետ համագործակցության հիման վրա: Հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների համագործակցությանունը ~~հիմնվումձևերն են է հետևյալ սկզբունքների վրա~~.

1) կարգավորող և վերահսկող այլ մարմինների կողմից կարգավորվող կամ վերահսկվող անձանց առնչվող ոլորտներում տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ խնդիրների մասին Հանձնաժողովը տեղեկացնում է համապատասխան մարմնին.

2) կարգավորող և վերահսկող այլ մարմինները օրենքով նախատեսված դեպքերում տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ իրավական ակտեր ընդունելուց առաջ ներկայացնում են Հանձնաժողով՝ խորհրդատվական կարծիքի.

3) Հանձնաժողովի նախագահը ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների ղեկավարները ընդունում են համատեղ հրամաններ, որով կարգավորվում են՝

ա. Հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ մարմինների միջև տեղեկատվության փոխանակման դեպքերն ու կարգը.

բ. հ~~Հ~~ամապատասխան ոլորտում տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ համագործակցության ընթացակարգերը կարգավորող, ինչպես նաև Հանձնաժողովի ու կարգավորող և վերահսկող այլ

մարմինների օրենքով սահմանված իրավասությունների շրջանակից բխող այլ հարցեր.

գ. Հանձնաժողովի կողմից կարգավորող և վերահսկող մարմնի վերահսկողական գործառույթների իրականացմանն օժանդակելու կարգն ու պայմանները:

Հոդված~~ՈՒՎԱԾ~~ 4. Հանձնաժողովի հիմնական խնդիրները

1. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման խթանման և պաշտպանվածության ապահովումը.

2) սույն օրենքի, այլ օրենքների և դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ –իրավական ակտերի կիրառման ապահովումը, դրանց խախտումների կանխարգելումը.

3) Հայաստանի Հանրապետությունում պետական տեղեկատվական համակարգի միջոցով ծառայություններ մատուցելու խթանմանը նպաստող պայմանների ստեղծումը.

4) օտարերկրյա պետական տեղեկատվական համակարգերի և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը.

5) կիբեռանվտանգության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման նպատակով Կառավարության քաղաքականության մշակմանը մասնակցելը.

6) պետական տեղեկատվական համակարգի կառավարման ապահովումը.

7) նույնականացման, թվային ստորագրության և գաղտնագրման ծրագրային ապահովումների մշակման կազմակերպման և ղեկավարման աշխատանքները.

8) օրենքով նախատեսված այլ խնդիրների իրականացումը:

2. Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված իրավասությունների սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական իրավական ակտեր, այդ թվում՝ նորմատիվ բնույթի:

3. Հանձնաժողովը սույն օրենքի կիրառման վերաբերյալ կարող է հրապարակել խորհրդատվական բնույթի ցուցումներ, ուղեցույցներ:

ԳԼ ՈՒ Խ 2
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Հոդված 5. Հանձնաժողովի կազմը և անդամներին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ նախագահ և 4 անդամ:

2. Հանձնաժողովի անդամների պաշտոններն ինքնավար պաշտոններ են:

3. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող անձը, որն ունի.

1) առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 5 տարին քաղաքական, ինքնավար, վարչական կամ հայեցողական պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման կամ համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) կամ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառներում և,

2) ~~ունեն~~ կիբեռանվտանգության, տվյալների մշակման, պաշտպանության, օգտագործման կամ հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտների օրենսդրության վերաբերյալ գիտելիքներ, որոնք կարող են հաստատվել գործատուի կողմից տրված աշխատանքային փորձի կամ կատարված աշխատանքի նկարագրության վերաբերյալ կամ այլ տեղեկատվությամբ:

Հոդված 6. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը:

2.Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հանձնաժողովի նախագահ կամ լիազորությունների ամբողջ ժամկետով՝ Հանձնաժողովի անդամ:

3. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը՝

1) չի համապատասխանում սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին.

2) լրացել է նրա 65 տարին.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է դիտավորությամբ կատարած հանցագործության համար.

5) օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

6) ունի Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդություն.:

7) վերջին հինգ տարիների ընթացքում ունեցել է Հանձնաժողովի գործունեության ոլորտներում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

4. —Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը: Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Կառավարությունը՝ երկու անդամ, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը՝ մեկական անդամ: Ընդ որում, եթե Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավելի են, ապա Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները հանձնաժողովի անդամի համապատասխան թափուր պաշտոնում առաջադրում են

նախապես համաձայնեցված մեկ միասնական թեկնածու: Կառավարությունը Հանձնաժողովի անդամների թեկնածուներ առաջադրելիս պետք է առաջնորդվի առավելագույնս տարբեր մասնագիտական կարողություններով և գիտելիքներով օժտված թեկնածուներ առաջադրելու սկզբունքով՝ սույն օրենքով սահմանված իրավասությունների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով:~~Հանձնաժողովի նախագահի և անդամների պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը:~~

5. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պաշտոնում թեկնածուն առաջադրվում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 6~~7~~-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահ կամ անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Կառավարությա~~ու~~նը ~~—~~կամ Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ~~սահմանված ժամկետում Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու չի առաջադրվում, ապա~~ ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում: ~~կրկին անգամ այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:~~ Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

6. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պաշտոնում նշանակումը կատարվում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:

Հոդված 7. ~~-~~Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետը

1. Հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի և Հանձնաժողովի առաջին կազմի:

2. Եթե Հանձնաժողովի անդամի պաշտոնում նշանակումը կատարվում է մինչև այդ պաշտոնի թափուր դառնալը, ~~ապա կատարվելու դեպքում~~ Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետն սկսվում է այդ պաշտոնը թափուր դառնալու օրվանից:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում Հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է նախորդ անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակահատվածը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի, որին գումարվում է մնացած ժամանակահատվածը: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնն առաջացել է այդ պաշտոնը զբաղեցրած անդամի՝ Հանձնաժողովի նախագահ նշանակվելու հետևանքով, ապա այդ թափուր պաշտոնում Հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածով: Եթե Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի, որին գումարվում է մնացած ժամանակահատվածը:

4. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի նախագահ է նշանակվում Հանձնաժողովի անդամներից մեկը, ապա նա պաշտոնավարում է մինչև իր՝ որպես Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի, որին գումարվում է մնացած ժամանակահատվածը:

5. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև նրա 65 տարին լրանալը:

Հոդված 8. Հանձնաժողովի անդամի գործունեության երաշխիքները

1. Հանձնաժողովի անդամն անկախ է և գործում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Հանձնաժողովի անդամը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր լիազորություններն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած որոշման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա արարքում առկա են հանցագործության հատկանիշներ:

3. Հանձնաժողովի անդամն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո չի կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել պաշտոնավարման ընթացքում Հանձնաժողովի իրականացրած վարչական վարույթի հետ կապված, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում թույլ տված սխալների և չարաշահումների քննության դեպքի:

4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Հանձնաժողովի անդամի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել, կամ Հանձնաժողովի անդամը կարող է ազատությունից զրկվել Գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա միայն Հանձնաժողովի համաձայնությամբ՝ Հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամն առանց Հանձնաժողովի համաձայնության կարող է զրկվել ազատությունից, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Հանձնաժողովի անդամին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Հանձնաժողովի նախագահին:

Հոդված 9. Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները

1. Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, հանդիսանալ որևէ կուսակցության անդամ

կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

2. Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Հոդված 10. Հանձնաժողովի նախագահը

1. Հանձնաժողովի նախագահը՝

1) իր իրավասության շրջանակում ներկայացնում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում, միջազգային և այլ կազմակերպություններում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների պետական մարմինների, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների հետ, կարող է կնքել հուշագրեր և իրավաբանական պարտադիր ուժ չունեցող միջազգային բնույթի այլ փաստաթղթեր.

2) ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այդ նպատակով տալիս է հանձնարարականներ, սահմանում է Հանձնաժողովի անդամների համակարգման ոլորտները, ըստ ոլորտների կատարում է աշխատանքի բաշխում Հանձնաժողովի անդամների միջև.

3) հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում է նիստի օրակարգը.

4) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները.

5) համակարգում և ապահովում է Հանձնաժողովի, նրա անդամների բնականոն աշխատանքը.

6) Հանձնաժողովի անդամների և իր կողմից նշանակվող աշխատողների համար հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, իր իրավասությունների սահմաններում աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հանձնաժողովի աշխատողներին, դատարանում հանդես է գալիս Հանձնաժողովի անունից, տալիս է Հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, ընդունում է հրամաններ, ներառյալ՝ համապատասխանության գնահատում, մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ~~, իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ~~.

7) կազմակերպում է Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների կատարումը.

8) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

2. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակվելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի՝ տարիքով ավագ անդամը:

Հոդված 11. Հանձնաժողովի անդամը

1. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին և քվեարկում, Հանձնաժողովի նիստի ժամանակ կարող է հանդես գալ ելույթներով, հարցերով և առաջարկություններով.

2) մեծամասնության կարծիքից տարբերվող կարծիք ունենալու դեպքում ներկայացնում է հատուկ կարծիք.

3) իր լիազորությունների սահմաններում համակարգում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքները, տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն, ապահովում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականների իրականացումը.

4) իր լիազորությունների սահմաններում հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում է քննարկումներ, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

5) իր լիազորությունների սահմաններում Հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր.

6) Հանձնաժողով և Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է առաջարկություններ:

Հոդված 12. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցումը

1. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) լրացել է նրա պաշտոնավարման տարիքը.

2) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

3) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

4) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է տվել.

5) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

6) նրա նկատմամբ պաշտոնավարման ընթացքում կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ.

7) նա մահացել է.

8) նա օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները Հանձնաժողովի եզրակացության հիման վրա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով դադարեցվում են, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդություն.

2) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է Հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից.

3) նա մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից.

4) նա խախտել է Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.

5) նա պարբերաբար չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր պաշտոնեական պարտականությունները.

6) պաշտոնավարման ընթացքում պարզվել է, որ նա նշանակման պահին չի համապատասխանել Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջներին, կամ առկա են եղել նշանակումը խոչընդոտող հիմքեր:

3. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են:

4. Հանձնաժողովի նախագահը կամ սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացությունը դրա ընդունման օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

5. Ազգային ժողով հրաժարական ներկայացնելիս Հանձնաժողովի անդամն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որի առաջարկությամբ նա նշանակվել է Հանձնաժողովի անդամ:

6. Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երեք, և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, իսկ այլ հիմքով Հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի նախագահը կամ սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամն այդ մասին գրավոր տեղեկացնում է ~~վարչապետին և~~ Ազգային ժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որն իրավասու է տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու՝ միաժամանակ՝ նշելով սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, որին պետք է համապատասխանի Հանձնաժողովի տվյալ անդամը:

7. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցվում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացության ընդունման պահից մինչև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով որոշման ընդունումը:

Հոդված 13. Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Հանձնաժողովի օրենքով նախատեսված գործառույթների իրականացման համար ձևավորվում են հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ:

2. Հանձնաժողովի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները քաղաքացիական ծառայողներ են: Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է: Հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և այլ օրենքներով:

3. Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները համարվում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներ:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

Հոդված 14. Հանձնաժողովի անդամների և ծառայողների վարձատրությունը

1. Հանձնաժողովի անդամների և քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով, իսկ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների համար ապահովվում է յուրաքանչյուր աշխատողի կոմպետենցիաների ~~(գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի պարտադիր պահանջների ամբողջություն)~~ շրջանակին համապատասխանող վարձատրություն՝ հաշվի առնելով «Հանրային տեղեկությունների մասին» ~~ՀՀ~~ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Կիբեռանվտանգության մասին» ~~ՀՀ~~ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի

1-ին կետով և 19-րդ հոդվածով սահմանված կազմակերպությունների աշխատողների համադրելի կոմպետենցիաների համար աշխատանքի շուկայում վարձատրության միջին չափերը: Սույն մասում նշված կազմակերպությունների համադրելի կոմպետենցիաներով աշխատողների շուկայական վարձատրության վերաբերյալ տեղեկատվություն Հանձնաժողովը ստանում է հարկային մարմնից, որը տեղեկատվություն տրամադրում է Հանձնաժողովի դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժ~~ո~~ողովը կարող է նաև նշված տեղեկատվությունը ստանալ սույն մասում նշված կազմակերպություններից: Աշխատողների աշխատանքի շուկայում վարձատրության միջին չափերը որոշելու համար հիմք է ընդունվում հարկային մարմնի հետ ճշգրտված տեղեկատվությունը:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների վարձատրության մեթոդաբանությունը հաստատում է Հանձնաժողովը:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ~~Հանձնաժողովում~~ պարգևատրման~~ումների~~ կարգը, բացառությամբ քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատականի հիման վրա պարգևատրման կարգի, հաստատում է Հանձնաժողովը:

Գ Լ ՈՒ Խ 3
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 15. Հանձնաժողովի գործունեությունը

1. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Սահմանադրությանը, սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան և իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն է:

2. Հանձնաժողովի գործառույթների և լիազորությունների իրականացման ընթացակարգերի մանրամասները սահմանվում են Հանձնաժողովի աշխատակարգով:

Հոդված 16. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) իրականացնում է վերահսկողություն տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության պահպանման նկատմամբ.

2) տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում ընդունում է կարգավորող իրավական ակտեր և իրականացնում է օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ, այդ թվում՝

ա. հաստատում է խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցներ.

բ. իրազեկում է հանրությանը տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառին առնչվող հարցերի մասին.

գ. տալիս է պարզաբանումներ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ.

դ. օրենքով նախատեսված դեպքերում տալիս է եզրակացություն.

ե. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց կամ դրանց պաշտոնատար անձանց տալիս է զգուշացում այն գործողությունների կամ վարքագծի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմանը կամ այդ բնագավառներում մեծացնել անվտանգային ռիսկերը, այդ ուղղությամբ ընդունում է կարգավորող ակտեր.

3) հարուցում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն.

4) իրականացնում է վերահսկողություն՝ Հանձնաժողովի որոշումների կատարման (պահպանման) նկատմամբ.

5) կազմակերպում է կիբեռանվտանգությանը սպառնացող ռիսկերի մոնիտորինգ, վերլուծություն և իրականացնում է պետական ու օրենքով նախատեսված այլ տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովում.

6) կազմակերպում է ~~իրականացնում է~~ թվային ճարտարապետության մշակումը, կառավարումը, զարգացումը, հոսթինգը, օգտագործումը և հասանելիության ապահովումը, այդ թվում՝ պետական տեղեկատվական համակարգի տեղեկություններին և կենտրոնական հարթակներին հասանելիության ապահովումը թվային անվտանգ միջավայրում.

7) կազմակերպում է ազգային նույնականացման շերտի մշակման, կառավարման, զարգացման և անխափան հասանելիության ապահովման աշխատանքները.

8) կազմակերպում է հանրային տեղեկությունները ամպային տիրույթում տեղակայման կառուցակարգերի մշակումը, կառավարումը և զարգացումը.

9) սույն օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ դիմում է պետական, տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի կամ դրանց պաշտոնատար անձի վերադասին, իսկ վերադաս չունենալու դեպքում՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական անձին կամ դրանց պաշտոնատար անձանց.

10) դիմում է դատարան՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց և դրանց պաշտոնատար անձանց տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրությունը խախտող ակտերը, գործողությունները և անգործությունը ոչ իրավաչափ կամ անվավեր ճանաչելու, դադարեցնելու կամ դրանցից ձեռնպահ մնալու պահանջով, եթե այդ վեճը հնարավոր չէ լուծել վարչական կարգով կամ բանակցությունների արդյունքում.

11) օրենքով սահմանված դեպքում դիմում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում աջակցություն ստանալու նպատակով.

12) ամփոփում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում օրենսդրության կիրառման փորձը և առաջարկություններ է մշակում դրա կատարելագործման ուղղությամբ.

13) մասնակցում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում պետական քաղաքականության մշակմանը.

14) հաստատում է իր աշխատակարգը.

15) սահմանում է Հանձնաժողովի վարչական վարույթի վերաբերյալ գործերի և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները, ինչպես նաև Հանձնաժողովի գործավարության կարգը.

16) սահմանում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում խախտումների վերաբերյալ արձանագրությունների ձևը.

17) գնահատում է անձը հաստատող փաստաթղթի տվյալների կրիչի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը օրենքով և դրա հիման վրա ընդունված ակտերով սահմանված պահանջներին.

18) սահմանում է Հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը.

19) սահմանում է Հանձնաժողովում տեղեկությունների դասակարգման կարգը.

20) օրենքով նախատեսված դեպքերում կազմակերպում և ապահովում է կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների կիբեռանվտանգությունը.

21) օրենքով նախատեսված դեպքերում կազմակերպում և իրականացնում է կիբեռանվտանգության միջադեպերին արձագանքման գործառույթները, համակարգում է կիբեռմիջադեպերի կանխարգելումը.

22) համագործակցում է քաղաքացիական հասարակության կառույցների հետ.

23) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

2. Հանձնաժողովը սույն հոդվածով նախատեսված լիազորությունների իրականացման ժամանակ և օրենքով նախատեսված այլ դեպքերում կարող է ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, ներքին և անհատական բնույթի իրավական ակտեր:

3.Հանձնաժողովի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման ընթացքում քրեորեն հետապնդելի արարքի հատկանիշներ հայտնի դառնալու դեպքում եռօրյա ժամկետում Հանձնաժողովն այդ մասին տեղեկացնում է

իրավապահ մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով: Անդրսահմանային կիբեռմիջադեպերի մասին հատկանիշներ հայտնի դառնալու դեպքում Հանձնաժողովը, նախքան այն կիբեռմիջադեպի հնարավոր դերակատարին վերագրելը, տեղեկացնում է արտաքին հարաբերությունների ոլորտում լիազորված մարմնին և հրապարակային հայտարարությունները նախօրոք քննարկում է այդ մարմնի հետ:

4.Հանձնաժողովի նախագահն ընդունում է անհատական և ներքին իրավական ակտեր՝ որոշումներ ու կարգադրություններ:

Հոդված 17.Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները

1. Հանձնաժողովն ընդունում է որոշումներ և եզրակացություններ:

2. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ընդունվում են գրավոր, բացառությամբ ընթացակարգային հարցերի քննարկման կամ ըստ էության որոշում չընդունելու (այդ թվում՝ դռնփակ նիստ գումարելու, հարցը քննարկումից հանելու, քննարկումը հետաձգելու, օրակարգում լրացուցիչ հարց ընդգրկելու, աշխատողներին հանձնարարություն տալու, նիստից հեռացնելու մասին որոշումները և այլն) դեպքերի: Հանձնաժողովի հայեցողությամբ այդ որոշումները ևս կարող են ձևակերպվել գրավոր:

3. Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ, պետական մարմնի միջնորդությամբ կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա կարող է պարզաբանել իր որոշումները և եզրակացությունները՝ առանց փոխելու դրանց բովանդակությունը:

Հոդված 18. Հանձնաժողովի նիստերը, քննարկումները և դրանց անցկացման կարգը

1. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ընդունվում են նիստում:

2. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի պահանջով, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված այլ դեպքերում:

3. Հանձնաժողովի նիստն անցկացվում է Հանձնաժողովի գտնվելու վայրում կամ Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ այլ վայրում:

4. Հանձնաժողովի նիստը նախագահում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անդամը:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն չորսերեք անդամ:

6. Հանձնաժողովի նիստերը կարող են կազմակերպվել հեռավար: Հանձնաժողովի անդամը նիստին կարող է մասնակցել հեռավար՝ Հանձնաժողովի նիստը նախագահողի համաձայնությամբ:

7. Հանձնաժողովի նիստին կամ դրա առանձին մասին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է նիստը նախագահողը:

8. Նիստին մասնակցող անձինք իրավունք ունեն կատարելու գրառումներ, սղագրություն և ձայնագրություն: Նիստի ընթացքում լուսանկարահանումը և տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ հեռահաղորդակցության կապի այլ միջոցով կատարվում են նախագահողի թույլտվությամբ:

9. Եթե նիստին ներկա անձանցից որևէ մեկը խախտում է նիստի կարգը կամ անհարգալից վերաբերմունք է դրսևորում Հանձնաժողովի կամ այլ անձանց նկատմամբ, ապա Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել նիստի անցկացման վայրից նրան հեռացնելու և նրա բացակայությամբ նիստը շարունակելու վերաբերյալ:

10. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Գրավոր արձանագրությունն ստորագրում են Հանձնաժողովի՝ նիստին մասնակցած բոլոր անդամները:

11. Շահագրգիռ անձանց շահերի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով Հանձնաժողովը որոշում է կայացնում նիստը կամ դրա առանձին մասն անցկացնել դռնփակ:

12. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին հարցը քննարկվում է դռնփակ:

13. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին որոշում կայացվելու դեպքում նիստին կամ դրա առանձին մասին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 19. Հարցի քննարկմանը և քվեարկությանը Հանձնաժողովի անդամի մասնակցության անհնարինությունը

1. Հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հարցի քննարկմանը և քվեարկությանը, եթե առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված բացարկ հայտնելու հիմքերից որևէ մեկը:

2. Հանձնաժողովի անդամը պարտավոր է ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի դառնալու պահից անհապաղ գրավոր կամ բանավոր Հանձնաժողով ինքնաբացարկ ներկայացնել՝ շարադրելով ինքնաբացարկի հիմք հանդիսացող հանգամանքները:

3. Հանձնաժողովի անդամը կարող է քննարկման առարկա դարձնել Հանձնաժողովի այլ անդամին բացարկ հայտնելու հարցը:

4. Հանձնաժողովի նիստը նախագահողը քննարկման է ներկայացնում ինքնաբացարկի կամ բացարկի հարցը, որը քննարկվում է Հանձնաժողովի՝ ինքնաբացարկ հայտնած կամ բացարկվող անդամի մասնակցությամբ:

5. Հարցի քննարկումից հետո Հանձնաժողովը կայացնում է որոշում: Հանձնաժողովի՝ ինքնաբացարկ հայտնած կամ բացարկվող անդամը, ինչպես նաև բացարկ հայտնած անդամը չեն մասնակցում ինքնաբացարկի կամ բացարկի հարցով քվեարկությանը:

6. Ինքնաբացարկի կամ բացարկի ընդունման դեպքում այդ անդամը չի մասնակցում այն հարցի քննությանը և քվեարկությանը, որի կապակցությամբ առկա է ինքնաբացարկի կամ բացարկի հիմք:

Հոդված 20. Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների ընդունման կարգը

1. Հանձնաժողովի նիստերում որոշումները և եզրակացություններն ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ~~նիստին մասնակցող~~

~~անդամների~~ ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում նիստը նախագահողի ձայնը որոշիչ է:

2. Քվեարկությունից ձեռնպահ մնալը կամ ձայնի փոխանցումը մեկ այլ անդամի չի թույլատրվում:

3. Հանձնաժողովի որոշման կամ եզրակացության պատճառաբանական կամ եզրափակիչ մասի վերաբերյալ տարբերվող կարծիք ունենալու դեպքում Հանձնաժողովի անդամը մեկ օրվա ընթացքում ներկայացնում է գրավոր հատուկ կարծիք: Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքն ստորագրվում և կցվում է համապատասխան որոշմանը կամ եզրակացությանը:

4. Հանձնաժողովի ընդունած որոշումը և եզրակացությունը Հանձնաժողովի նախագահն ստորագրում է մեկ օրվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի:

5. Հանձնաժողովի ընդունած որոշումը կամ եզրակացությունը, որն ընդունվել է որոշակի դիտողությունների և առաջարկությունների ներկայացմամբ, դրանց համապատասխան լրամշակվում և Հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրվում է հինգ օրվա ընթացքում:

6. Հանձնաժողովի որոշումները կամ եզրակացությունները, մինչև սահմանված կարգով ընդունվելը, կարող են քննարկվել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ իրավաբանական անձանց որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձանց մասնակցությամբ: Շահագրգիռ կողմերի հետ Հանձնաժողովի որոշումները կամ եզրակացությունները քննարկելու կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 21. Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների ընդունման մասին իրազեկելը և ուժի մեջ մտնելը

1. Հանձնաժողովի որոշումները և եզրակացություններն ստորագրվելուց հետո՝ եռօրյա ժամկետում ուղարկվում են հասցեատիրոջը: Հանձնաժողովի որոշումները, եզրակացությունները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում, բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող հատվածների:

2. Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովի նախագահի ստորագրման պահից, եթե այդ որոշմամբ ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Հանձնաժողովի ընդունած վարչական ակտերը և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Հանձնաժողովի եզրակացություններն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

4. Պետական տեղեկատվական համակարգի և կիբեռանվտանգության բնագավառի հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության կատարումը պարտադիր է: Եզրակացությամբ չառաջնորդվելը հիմք է հանդիսանում հանրային տեղեկություններին հասանելիությունը սահմանափակելու կամ հասանելիություն չտրամադրելու կամ օրենքով նախատեսված դեպքերում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար:

Հոդված 22. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական անձանց պարտականությունը Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են հինգ աշխատանքային օրվա ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ, եթե նշված տվյալները, նյութերը և տեղեկությունները պահանջելու մասին Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

2. Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ պահանջելիս Հանձնաժողովը տեղեկացնում է դրանք ներկայացնելու ժամկետների, ինչպես նաև սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տվյալներ, նյութեր և տեղեկություններ ներկայացնելու իրավական հետևանքների մասին:

3. Հիմնավոր միջնորդության հիման վրա սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել համապատասխանաբար՝ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ:

4. Հանձնաժողովը կարող է ստանալ և լիազորություններն իրականացնելիս օգտագործել պետական էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը:

Հոդված 23. Գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանումը

1. Առևտրային, պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները պահպանվում են օրենքով սահմանված կարգով:

2. Հանձնաժողովի նախագահը, անդամները, հանրային ծառայողները և աշխատողները չեն կարող հրապարակել կամ այլ կերպ տարածել ծառայողական օգտագործման համար նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև օգտագործել նման տեղեկությունները շահադիտական նպատակներով:

3. Սույն օրենքի իմաստով ծառայողական օգտագործման համար նախատեսված տեղեկություններ են համարվում նաև Հանձնաժողովի հանրային ծառայողներին և աշխատողներին իրենց ծառայողական (աշխատանքային) պարտականությունները կատարելու ընթացքում հայտնի դարձած տեղեկությունները, այդ թվում՝ Հանձնաժողովի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման ընթացքում կիբեռանվտանգության, տեղեկատվական համակարգերի անվտանգության գործիքների կիրառման, տեխնոլոգիական և ծրագրային լուծումների, ինչպես նաև վերահսկողության և հսկողության տվյալների վերաբերյալ, բացառությամբ՝ հրապարակված կամ այլ կերպ տարածված տեղեկությունների:

4. Հանձնաժողովը կարող է սահմանել ծառայողական օգտագործման համար նախատեսված տեղեկությունների ցանկ և պահպանության տարբեր աստիճաններ, ինչպես նաև դրանց օգտագործման կարգը:

5. Սույն հոդվածում նշված տեղեկությունների հրապարակման հետևանքով հասցված վնասը ենթակա է փոխհատուցման օրենքով սահմանված կարգով:

Հոդված 24. Հանձնաժողովի գործունեության կազմակերպումը

1. Հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները:

2. Հանձնաժողովի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է Հանձնաժողովը:

3. Հանձնաժողովի հաստիքացուցակը, կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունը, պաշտոնների, այդ թվում՝ հայեցողական պաշտոնների, քաղաքացիական աշխատանք և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը հաստատում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 25. Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը և բողոքարկումը

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված կարգավորումները:

2. Հանձնաժո~~ռա~~ղովի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Հանձնաժողովի որոշումը, բացառությամբ տուգանք կիրառելու մասին որոշման (այսուհետ՝ հանրային իրավական դրամական պահանջ), ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան որոշման մեջ սահմանված ժամկետում կատարման, և դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

3. Այն դեպքում, երբ հանձնաժողովի որոշումը, բացի հանրային իրավական դրամական պահանջից, ներառում է նաև այլ կարգավորումներ, ապա սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունը կիրառվում է միայն հանրային իրավական դրամական պահանջի մասով:

Հոդված 26. Հանձնաժողովի ֆինանսավորումը

1. Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. Հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում Հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտը՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

3. Բյուջետային հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում անփոփոխ, իսկ առարկության դեպքում փոփոխված ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում: Պետական բյուջեի նախագծի հետ միասին Ազգային ժողով է ներկայացվում նաև Հանձնաժողովի հայտը:

Հոդված 27. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը

1. Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին: Հաղորդումը ներառում է նախորդ տարվա ընթացքում Հանձնաժողովի իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկություններ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ:

2. Հաղորդումը Ազգային ժողովում քննարկվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկությունների:

ԳԼՈՒԽ 4

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդված 28. Վերահսկողություն ~~և համապատասխանության գնահատում~~ իրականացնելը

1. Օրենքով նախատեսված դեպքերում, օրենքով և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնում և բացառությամբ սույն հոդվածի 2~~3~~-րդ մասի՝ պատասխանատվության միջոցներ կիրառում է Հանձնաժողովը՝ սույն օրենքով սահմանված կարգով համապատասխանության գնահատում իրականացնելու միջոցով:

2. Օրենքով նախատեսված համապատասխան գործառույթների առկայության դեպքում իրավաբանական անձի նկատմամբ սույն օրենքով և «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված վերահսկողությունն իրականացնում է կարգավորող և վերահսկող մարմինը: Սույն մասով իրականացվող վերահսկողությունից հետո մեկ ամսվա ընթացքում համապատասխան կարգավորող և վերահսկող մարմինը վերահսկողության արդյունքների մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:~~Կիբեռանվտանգության ոլորտում օրենքով նախատեսված կարգավորող և վերահսկող այլ մարմին առկա չլինելու կամ կարգավորող և վերահսկող այլ մարմնի կիբեռանվտանգության ապահովման ոլորտում գործառույթների իրականացման իրավական հիմքերի բացակայության դեպքում իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հանձնաժողովը՝ սույն օրենքով սահմանված կարգով:~~

3. ~~Օրենքով նախատեսված համապատասխան գործառույթների առկայության դեպքում իրավաբանական անձի նկատմամբ սույն օրենքով և «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված վերահսկողությունն իրականացնում է կարգավորող և վերահսկող մարմինը: Սույն մասով իրականացվող վերահսկողությունից հետո մեկ ամսվա ընթացքում համապատասխան կարգավորող և վերահսկող մարմինը վերահսկողության արդյունքների մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:~~Կիբեռանվտանգության ոլորտում օրենքով նախատեսված կարգավորող և վերահսկող այլ մարմին առկա չլինելու կամ կարգավորող և վերահսկող ~~այլ~~ մարմնի կիբեռանվտանգության ապահովման ոլորտում

գործառույթների իրականացման իրավական հիմքերի բացակայության դեպքում իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հանձնաժողովը՝ սույն օրենքով սահմանված կարգով:

4. Հանձնաժողովը իրավաբանական անձանց նկատմամբ օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ընթացքում համապատասխան կարգավորող և վերահսկող այլ մարմինների հետ համագործակցությունն ապահովվում է սույն օրենքով սահմանված կարգով:

5. Համապատասխանության գնահատումն իրականացնում է Հանձնաժողովի կողմից ստեղծվող համապատասխանության գնահատում իրականացնելու համար լիազորված խումբը (այսուհետ՝ գնահատող խումբ):

6. Համապատասխանության գնահատումներն անցկացվում են Հանձնաժողովի որոշմամբ՝ Հանձնաժողովի տարածքում: Առանձին դեպքերում, Հանձնաժողովի որոշմամբ, գնահատող խմբի անդամները վերահսկվող անձի մոտ կարող են իրականացնել տեղեկատվական համակարգերի տեխնիկական և ֆիզիկական անվտանգության պահանջների համապատասխանության գնահատում: Սույն մասում նշված որոշման մեջ նշվում են վերահսկվող անձի անվանումը, համապատասխանության գնահատման նպատակը, ուղղությունները (ոլորտները), գնահատող խմբի կազմը, այդ թվում՝ ղեկավարը, համապատասխանության գնահատում անցկացնելու սկիզբը և ավարտը:

7. Սույն օրենքի հիման վրա համապատասխանության գնահատման արդյունքում կազմված հաշվետվություններում և եզրակացություններում (տեղեկանքներում) պարունակվող տեղեկությունները համարվում են ծառայողական օգտագործման համար տեղեկություններ, որոնք կարող են երրորդ անձանց տրամադրվել բացառապես օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

8. Սույն հոդվածի 2~~3~~-րդ մասով նախատեսված դեպքում կարգավորող և վերահսկող ~~այլ~~ մարմինը վերահսկողություն իրականացնում է օրենքներով և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ:

9. Հանձնաժողովը համապատասխանության գնահատում իրականացնելիս իրավունք ունի ստանալու այլ պետական մարմինների աջակցությունը:

10. Հանձնաժողովը կարող է համապատասխանության գնահատման ցանկացած փուլում առանձին հարցերի պարզաբանման նպատակով ներգրավել համապատասխան մասնագետների, փորձագետների:

11. Հանձնաժողովը կարգավորող և վերահսկող այլ մարմինների կողմից շահագործվող տեղեկատվական համակարգերի նկատմամբ վերահսկողություն իրականացնում է մշտադիտարկման միջոցով՝ նշված մարմիններից ստացված, օրենքով սահմանված աուդիտի արդյունքների հիման վրա:

12. Սույն հոդվածը չի տարածվում Հանձնաժողովի կողմից կնքված պայմանագրերի պայմանների պահպանման նկատմամբ իրականացվող ստուգումների դեպքերի վրա: Պայմանագրերի պայմանների նկատմամբ իրականացվող ստուգումների կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 29. Համապատասխանության գնահատման պայմանները

1. Համապատասխանության գնահատումներն անցկացվում են վերահսկվող անձի տեղեկատվական համակարգերին հասանելիություն ապահովելու միջոցով և տեղեկատվական համակարգերի ու կիբեռանվտանգության ապահովման պահանջներին վերաբերող տվյալների, նյութերի և տեղեկությունների, դրանցում կատարված փոփոխությունների, վերաբերող պայմանագրերի (ակտերի, արձանագրությունների և այլ փաստաթղթերի), տեխնիկական առաջադրանքների, անկախ աուդիտորական եզրակացությունների ուսումնասիրության և վերլուծության միջոցով:

2. Համապատասխանության գնահատման ընթացքում, առանց գնահատող խմբի ղեկավարի թույլտվության, կողմնակի անձանց մուտքը գնահատող խմբի աշխատանքային տարածք արգելվում է:

3. Համապատասխանության գնահատում իրականացնելիս կարող են կիրառվել համակարգչային տեխնոլոգիաներ և այլ տեխնիկական կամ ծրագրային միջոցներ, էլեկտրոնային և այլ սարքավորումներ, կրիչներ, թվային տիրույթում

կատարվել գործողություններ՝ ուղղված համապատասխանության գնահատման իրականացմանն ու արդյունքների ամփոփմանը:

Հոդված 30. Վերահսկվող անձի պարտականությունները

1. Վերահսկվող անձը պարտավոր է՝

1) ապահովել տեղեկատվական համակարգերին և կիբեռանվտանգության ապահովման պահանջներին վերաբերող տվյալների, նյութերի և այլ տեղեկությունների, դրանցում կատարված փոփոխությունների, վերաբերող պայմանագրերի (ակտերի, արձանագրությունների և այլն), տեխնիկական առաջադրանքների, անկախ աուդիտորական եզրակացությունների տրամադրումը գնահատող խմբին, ինչպես նաև ապահովել գնահատող խմբի հասանելիությունը տեղեկատվական համակարգերին, էլեկտրոնային ծրագրերին՝ անկախ այն հանգամանքից դրանք պարունակում են առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ կամ անձնական տվյալներ, թե ոչ.

2) ~~պարտավոր է~~ կատարել գնահատող խմբի ղեկավարի օրինական պահանջները, ինչպես նաև գնահատող խմբի ղեկավարին և անդամներին ներկայացնել գրավոր և բանավոր բացատրություններ, տեղեկություններ և պարզաբանումներ համապատասխանության գնահատման ենթակա հարցերի վերաբերյալ:

2. Արգելվում է համապատասխանության գնահատման ընթացքում խոչընդոտել կամ միջամտել գնահատող խմբի անդամների օրինական գործողություններին: Գնահատող խմբի անդամները, հրավերի առկայության դեպքում, կարող են մասնակցել վերահսկվող իրավաբանական անձի կառավարման մարմինների ~~կոլեգիալ գործադիր մարմնի (տնօրենների խորհրդի)~~ նիստերին, ժողովներին և քննարկումներին, ~~և~~ ներկայացնել ~~և քննարկել~~ համապատասխանության գնահատման արդյունքները, հնարավոր հետևանքները:

Հոդված 31. Գնահատող խմբի իրավունքները և պարտականությունները: Հանձնաժողովի պատասխանատվությունը

1. Գնահատող խումբը համապատասխանության գնահատում իրականացնելու նպատակով իրավասու է՝

1) վերահսկվող անձից, նրա ղեկավարներից և իրավասու աշխատողներից պահանջել համապատասխանության գնահատման ենթակա տեղեկատվական համակարգերին, էլեկտրոնային ծրագրերին հասանելիություն, տվյալներ, նյութեր և տեղեկություններ.

2) վերահսկվող անձի ղեկավարությանը և իրավասու աշխատողներին իրենց իրավասության սահմաններում ներկայացնել հիմնավոր այլ պահանջներ, եթե դրանք բխում են համապատասխանության գնահատման անհրաժեշտությունից և նպատակից:

2. Գնահատող խումբը պարտավոր է համապատասխանության գնահատումն իրականացնել սույն օրենքով և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերով սահմանված կարգով: Գնահատող խումբը պարտավոր է աշխատանքների ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխանության գնահատման վերաբերյալ հաշվետվությունը, եզրակացությունը (տեղեկանքները) ներկայացնել Հանձնաժողովի նախագահին:

3. Հանձնաժողովը պատասխանատվություն է կրում գնահատող խմբի անդամներին ժամանակավորապես տրամադրված տվյալների, նյութերի և տեղեկությունների պահպանության, ապահովության և վերադարձելիության համար:

Հոդված 32. Համապատասխանության գնահատման ուղղությունները (ոլորտները) և ամփոփումը

1. Հանձնաժողովը կարող է համապատասխանության գնահատում իրականացնել հետևյալ ուղղություններով (ոլորտներով)՝

1) օրենքով նախատեսված կարգով տեղեկատվական համակարգերի և պետական տեղեկատվական համակարգի անվտանգության ապահովման գնահատում.

2) օրենքի պահանջներին պաշտոնական կայքերի կամ դրանց բջջային հավելվածների գնահատում.

3) տեղեկությունների և տվյալների օրենքով սահմանված կարգով օգտագործման և պահպանության գնահատում.

4) տեղեկատվական մուտքի հարթակի, տվյալների փոխանակման շերտի օգտագործման, տվյալների շտեմարանների ստեղծման, ներդրման, կառավարման, շահագործման, օգտագործման, պահպանման, վերակազմավորման և դադարեցման գնահատում.

5) տվյալների կառավարման, ամպային տիրույթում տեղակայման, տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցների կիրառման և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների գնահատում.

6) կիբեռհարձակման կամ կիբեռմիջադեպերի պատճառների ու հետևանքների գնահատում, ձեռնարկված միջոցառումների օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների գնահատում.

7) որակավորված աուդիտորի կողմից կիբեռանվտանգության աուդիտի արդյունքներով կազմված հաշվետվության պահանջների կատարման կամ բացահայտված թերությունների վերացման գնահատում:

2. Համապատասխանության գնահատման ընթացքում կարող է կատարվել վերլուծություն և գնահատում՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր ուղղություններով (ոլորտներով) կամ դրանց մի մասով:

3. Հանձնաժողովի նախագահն իրավասու է, մինչև համապատասխանության գնահատումը սկսելը, վերահսկվող անձից պահանջել Հանձնաժողով ներկայացնել համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ տվյալները, նյութերը և տեղեկությունները: Այդ դեպքում վերահսկվող անձը պարտավոր է Հանձնաժողովի նախագահի գրավոր պահանջը կատարել հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե գրությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

4. Համապատասխանության գնահատման ավարտից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վերահսկվող անձի ղեկավարների, գնահատող խմբի անդամների և Հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված այլ մասնակիցների մասնակցությամբ անցկացվում է համապատասխանության գնահատման

արդյունքների քննարկում: Քննարկումը կազմակերպում, մասնակիցների ցանկը Հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցնում և հրավերները փոխանցում է գնահատող խմբի ղեկավարը:

5. Հանձնաժողովի գրավոր պահանջով վերահսկվող անձը պարտավոր է ապահովել համապատասխանության գնահատման արդյունքների ներկայացումը կազմակերպության մասնակիցներին, ինչպես նաև վերջիններիս կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությունն համապատասխանության գնահատման արդյունքների քննարկմանը: Նշված անձանց բացակայությունը հիմք չէ քննարկումը չիրականացնելու համար: Քննարկմանը կարող են հրավիրվել նաև տվյալ կազմակերպությունում աուդիտ անցկացրած անկախ աուդիտորական կազմակերպության ներկայացուցիչները: Քննարկման արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

6. Քննարկման արդյունքների հիման վրա, Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված ժամկետում, գնահատող խումբը կազմում է համապատասխանության գնահատման հաշվետվություն:

7. Հաշվետվությունը կազմվում է երկու օրինակից, որոնք ստորագրում են գնահատող խմբի անդամները: Հաշվետվության մեկ օրինակը փոխանցվում է վերահսկվող անձի ղեկավարությանը:

8. Վերահսկվող անձի գործադիր մարմինը կամ նրա նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցն իրավունք ունեն հաշվետվության վերաբերյալ ներկայացնել իրենց գրավոր առարկություններն ու բացատրությունները՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 33. Խախտման արձանագրումը

1. Սույն օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող խումբը Օրենքների, Հանձնաժողովի որոշումների և իրավական այլ ակտերի պահանջների խախտումներն արձանագրում է արձանագրություն (այսուհետ՝ արձանագրություն) կազմելու միջոցով: Արձանագրությունը ստորագրում են գնահատող խմբի բոլոր անդամները: Արձանագրությունը գնահատող խմբի բոլոր անդամների կողմից

ստորագրվելու պահից խախտումը համարվում է սույն օրենքով սահմանված կարգով արձանագրված: Խախտումն արձանագրելու պահից սկսվում է պատասխանատվության միջոցի կիրառման վարույթը (այսուհետ՝ վարույթ), որն իրականացվում է սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված կարգավորումները:

2. Արձանագրության մեջ մանրամասնորեն նկարագրվում է խախտումը և նշվում է օրենքի, հանձնաժողովի որոշման կամ իրավական այլ ակտի նորմը, որը խախտվել է, ինչպես նաև պատասխանատվության միջոցը, որը ենթակա է կիրառման:

3. Արձանագրությունը կազմելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում այն գրությամբ ուղարկվում է խախտումը թույլ տված անձի գործադիր մարմնի ղեկավարին:

4. Արձանագրությունը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում վերահսկվող անձը ստորագրում է արձանագրությունը և առձեռն հանձնում Հանձնաժողով: Արձանագրությանը կից կարող է ներկայացվել ստորագրված գրավոր բացատրություններ կամ պարզաբանումներ:

Հոդված 34. Պատասխանատվության միջոցի կիրառման հիմքերը և պատասխանատվության միջոցները

1. Հանձնաժողովը համապատասխանության գնահատման արձանագրության հիման վրա կիրառում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, եթե խախտվել են Օրենքների, Հանձնաժողովի որոշումների և իրավական այլ ակտերի պահանջները:

Հոդված 35. Համապատասխանության գնահատմանը խոչընդոտելը

1. Հանձնաժողովին վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարման խոչընդոտում է համարվում վերահսկվող անձի կամ անձի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կամ նրա աշխատակցի կամ այլ ներկայացուցչի կողմից սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ տվյալներ, նյութեր

կամ տեղեկություններ չներկայացնելը կամ տեղեկատվական համակարգին հասանելիություն չապահովելը ~~կամ համապատասխանության գնահատման արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելը~~ կամ այլ կերպ համապատասխանության գնահատմանը խոչընդոտելը, որն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 36. Հանձնաժողովի կողմից մշտադիտարկում իրականացնելը

1. Պետական տեղեկատվական համակարգի անխափան գործունեությունն ու անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև այլ~~ն~~ հնարավոր խոցելիություններից պաշտպանելու նպատակով Հանձնաժողովը կարող է իրականացնել մշտադիտարկում՝ Հանձնաժողովի տարածքում: Մշտադիտարկման ընթացքում իրականացվում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով և Հանձնաժողովի որոշումներով ու եզրակացություններով սահմանված պահանջների ապահովման վերլուծություն: Տեղեկատվական համակարգի կառավարչի համաձայնությամբ մշտադիտարկում կարող է իրականացվել իր տարածքում: Տարեկան մշտադիտարկումների ծրագիրը հաստատում է Հանձնաժողովը:

2. Մշտադիտարկում է համարվում օրենքով նախատեսված պետական տեղեկատվական համակարգերի, փոխանակման շերտի, ինչպես նաև իրավաբանական անձի տիրույթում Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան կարգաբերված և փոխանակման շերտի մաս կազմող սարքերի, սարքավորումների և ծրագրային ապահովման միջոցների նկատմամբ որոշակի պարբերականությամբ իրականացվող դիտարկումը:

3. Մշտադիտարկում իրականացնելիս կարող են կիրառվել համակարգչային տեխնոլոգիաներ և այլ տեխնիկական կամ ծրագրային միջոցներ, էլեկտրոնային և այլ սարքավորումներ, կրիչներ, կատարվել այլ գործողություններ՝ ուղղված մշտադիտարկման իրականացմանն ու արդյունքների ամփոփմանը:

4. Մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա: Հրամանում նշվում են մշտադիտարկման ենթակա հարցերը,

մշտադիտարկման ժամանակահատվածը, պարբերականությունը, մշտադիտարկում իրականացնող անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը): Մշտադիտարկման ներքին ընթացակարգը, արդյունքների ամփոփման և ներկայացման կարգը հաստատում է Հանձնաժողովը:

5. Հանձնաժողովը պարտավոր չէ մշտադիտարկում իրականացնելու մասին տեղեկացնել մշտադիտարկման ենթակա տեղեկատվական համակարգի կառավարչին,÷ բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տեղեկատվական համակարգի կառավարչի համաձայնությամբ մշտադիտարկում իրականացնելու դեպքի:

6. Մշտադիտարկման արդյունքների հիման վրա պատասխանատվության միջոցներ չեն կարող կիրառվել:

7. Մշտադիտարկման արդյունքում Հանձնաժողովը՝ եզրակացությամբ կամ Հանձնաժողովի նախագահը՝ գրությամբ, կարող են պահանջել ապահովել սույն օրենքի, այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և Հանձնաժողովի որոշումների ու եզրակացությունների կիրառումը կամ վերացնել կամ կանխել դրանց խախտումները կամ նվազեցնել ռիսկերը, եթե գտնում է, որ.

1) բացահայտման ենթակա տեղեկությունը սահմանված կարգով չի բացահայտվել կամ սահմանված կարգով չի ապահովվել պաշտոնական վեբ-կայքի պահպանումն ու սպասարկումը.

2) օրենքով սահմանված կարգի խախտմամբ հասանելիություն է տրվել կամ բացահայտվել է տեղեկություն.

3) չի ապահովվել սույն օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրերով սահմանված՝ տեղեկատվական հարթակի, տվյալների շտեմարանների ստեղծման, ներդրման, կառավարման, շահագործման, օգտագործման, պահպանման, վերակազմավորման և դադարեցման պահանջները կամ պայմանները.

4) չի ապահովվել տվյալների կառավարման, ամպային տիրույթում տեղակայման, տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցների կիրառման և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի

սույն օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրերով սահմանված պահանջները կամ պայմանները:

8. Հանձնաժողովն իրավունք ունի սույն հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելուն զուգահեռ սահմանափակել նաև տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման հանարավորությունը՝ մինչև Հանձնաժողովի եզրակացության կատարումը, եթե ունի հիմնավոր կասկածներ, որ նշված սահմանափակումը չկիրառելը կարող է խափանել պետական տեղեկատվական համակարգի անվտանգ և անխափան աշխատանքը:

9.Տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման սահմանափակումը վերացնում է Հանձնաժողովը, եթե ապահովվել է սույն օրենքի, այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և Հանձնաժողովի որոշումների ու եզրակացությունների կիրառումը կամ վերացվել կամ կանխվել են դրանց խախտումները կամ նվազեցվել են ռիսկերը: Տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման սահմանափակումը վերացնելու կարգը հաստատում է Հանձնաժողովը:

10. Համապատասխան մարմինը կամ իրավաբանական անձը պարտավոր է սույն հոդվածով նախատեսված եզրակացությունը կամ գրությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում միջոցներ ձեռնարկել դրանցով ներկայացված օրինական պահանջները կատարելու ուղղությամբ և այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովի նախագահին:

11. Կիբեռանվտանգության ապահովման բնագավառում Հանձնաժողովը մշտադիտարկումներ իրականացնում է «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Հոդված~~ՈԴՎԱԾ~~ 37. Հանձնաժողովի օրինական պահանջները չկատարելու հետևանքները

1. Եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ օրենքով նախատեսված դեպքերում նաև իրավաբանական անձը չի կատարում Հանձնաժողովի օրինական պահանջները, ապա Հանձնաժողովը.

1) դիմում է տվյալ մարմնի վերադաս մարմնին կամ համապատասխան պաշտոնատար անձին՝ պարտականությունների կատարման մեջ թերացած անձի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու գործընթաց սկսելու համար.

2) սույն օրենքով սահմանված կարգով նախաձեռնում է համապատասխանության գնահատում սկսելու գործընթաց.

3) սահմանափակում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օգտագործման հանարավորությունը՝ մինչև Հանձնաժողովի օրինական պահանջների կատարումը, եթե ունի հիմնավոր կասկածներ, որ նշված սահմանափակումը չկիրառելը կարող է խափանել պետական տեղեկատվական համակարգի անվտանգ և անխափան աշխատանքը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հետևանքը կարող է կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ 1-ին կամ 2-րդ կետերի հետ միաժամանակ:

3. Կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու իրավունք ունեցող պաշտոնատար անձը պարտավոր է դիմումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում ձեռնարկել միջոցներ և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

4. Տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտին հասանելիությունը վերակագնելու կարգը սահմանում է Հանձնաժողովը:

Գ Լ Ո Ւ Խ 5

ՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԵՎ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հ~~ոդված~~~~ՈԴՎԱԾ~~ 38. Պետական տեղեկատվական համակարգին և կիբեռանվտանգությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացության հիմքերը

1. Հանձնաժողովը եզրակացություններ ընդունում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Օրենքով նախատեսված դեպքերում եզրակացություն ստանալու նպատակով Հանձնաժողով դիմելու իրավունք ունեն պետական, տեղական ինքնակառավարման մարմինները և իրավաբանական անձինք:

3. Եզրակացություն ստանալու նպատակով Հաձնաժողով դիմելու կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 39. Եզրակացություն տալու կարգը

1. Պետական տեղեկատվական համակարգի և կիբեռանվտանգության բնագավառի հարցերի վերաբերյալ եզրակացություն Հանձնաժողովը տրամադրում է պետական, տեղական ինքնակառավարման մարմնի կամ իրավաբանական անձի դիմումն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ եզրակացություն տալու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև տասնհինգ աշխատանքային օրով:

3. Նախքան եզրակացության ընդունումը Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կարող է դիմել դիմումատուին՝ եզրակացության ընդունման համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու պահանջով, ինչպես նաև ստանալ քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, դիմումատուին կամ նրա պաշտոնատար անձանց հրավիրել Հանձնաժողովի նիստի կամ քննարկման:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունների բացակայության դեպքում Հանձնաժողովը եզրակացություն ընդունում է այդ տեղեկությունների

բացակայությամբ՝ նշելով դրա նշանակությունը և ազդեցությունը քննարկվող հարցի վերաբերյալ:

Գ Լ Ո Ւ Խ 6
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 40. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության իրավական հիմքերը

~~1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի առանձնահատկությունները կարգավորվում են սույն օրենքով:~~

1~~2~~. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով:

~~3~~2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

3. ~~և~~ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարագիր), որը հաստատում է գլխավոր քարտուղարը: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անձնագրերի չափանիշները հաստատում է Հանձնաժողովի նախագահը:

~~«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:~~

Հոդված 41. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների պաշտոնների համակարգը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից:

~~. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.~~

~~1) գլխավոր պաշտոններ.~~

~~2) առաջատար պաշտոններ.~~

~~3) կրտսեր պաշտոններ:~~

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները դասակարգվում են երեք խմբերի, որոնցից յուրաքանչյուրը դասակարգվում է երեք ենթախմբերի:

~~Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների գլխավոր պաշտոնները դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի:~~

3. ~~.~~ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անվանումները, խմբերը և ենթախմբերը սահմանում է Հանձնաժողովը՝ որի համար սույն օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասում նշված որակավորումները կրում են կողմնորոշիչ բնույթ:

~~Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների առաջատար պաշտոնները դասակարգվում են հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.~~

~~1) 1-ին ենթախումբ՝ առաջին դասի ավագ մասնագետ.~~

~~2) 2-րդ ենթախումբ՝ երկրորդ դասի ավագ մասնագետ.~~

~~3) 3-րդ ենթախումբ՝ երրորդ դասի ավագ մասնագետ:~~

~~4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների կրտսեր պաշտոնները դասակարգվում են հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.~~

~~1) 1-ին ենթախումբ՝ առաջին դասի կրտսեր մասնագետ.~~

~~2) 2-րդ ենթախումբ՝ երկրորդ դասի կրտսեր մասնագետ.~~

~~3) 3-րդ ենթախումբ՝ երրորդ դասի կրտսեր մասնագետ:~~

~~5. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:~~

~~6. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայության պաշտոնների դասակարգումը սահմանում է Հանձնաժողովը, որի համար կողմնորոշիչ նշանակություն ունեն սույն հոդվածում նշված պաշտոնների դասակարգումները:~~

Հոդված 42. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պաշտոն ~~կարող է~~ զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության ~~այն~~ քաղաքացին.~~, որը՝~~

1) պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն, բացառությամբ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների ամենաբարձր խմբի ամենաբարձր ենթախմբի պաշտոնների, որոնք զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն.

~~ունի բարձրագույն կրթություն.~~

2) պետք է տիրապետի~~ում է~~ հայերենին.

3) պետք է բավարարի տվյալ ~~ում է~~ պաշտոնի անձնագրովն~~ներկայացվող՝ սույն օրենքով նախատեսված~~ պահանջներինը~~,~~ և առկա չլինի~~են~~ պաշտոնի նշանակման համար ~~սույն~~ օրենքով սահմանված սահմանափակումները.~~:~~

4) պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքերում պետք է ունենա պահանջվող գիտելիքները ու կոմպետենցիաները հիմնավորող փաստաթուղթ (օրինակ՝ որակավորում, սերտիֆիկատ և այլն):

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից.

4) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

5) որի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի հարուցվել ոչ արդարացնող հիմքով.

6) որն ունի Կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացումը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ.

7) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Հոդված 43. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի նշանակելու պայմանները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում ծառայողների՝ գործառույթից կախված որակավորման պահանջները սահմանում է Հանձնաժողովը, որի համար Միջազգային հավատարմագրման ֆորումի բազմակողմ ճանաչման համաձայնագրին միացած ազգային հավատարմագրման մարմինների կողմից ISO/IEC 17024 ստանդարտով հավատարմագրված հավաստագրման մարմինների կողմից տրված որակավորումները կրում են կողմնորոշիչ բնույթ:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոնի նշանակման պայմանները հաստատում է Հանձնաժողովը:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները համալրվում են կա՛մ մրցութային կարգով, կա՛մ փոխադրման կարգով, կա՛մ կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգով: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները մրցութային կարգով համալրելու կարգը և պայմանները սահմանում է Հանձնաժողովը:

~~Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները համալրվում են Հանձնաժողովի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա կամ փոխադրման կարգով, կամ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգով:~~

4. Եթե տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության թափուր պաշտոնը չի զբաղեցվում փոխադրման կարգով կամ կադրերի ռեզերվից կամ սույն օրենքով նախատեսված մրցութային կարգով, ապա կարող է զբաղեցվել ժամկետային աշխատանքային պայմանագրով: Սույն մասով սահմանված պայմանագիրը կնքվում է առավելագույնը վեց ամիս ժամկետով և այն անձի հետ, որը բավարարում է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

5. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման նպատակով Հանձնաժողովի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը կարող է առաջարկություն ներկայացնել Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայության կադրերի ռեզերվում գտնվող ծառայողին թափուր պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ, եթե նա բավարարում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

~~6. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված առաջարկությունը կարող է ներկայացվել, եթե թափուր պաշտոնը չի գերազանցում կադրերի ռեզերվում գտնվող~~

~~ծառայողի վերջին պաշտոնի (հաստիքային միավորի) ենթախումբը հաջորդող մեկ ենթախմբով բարձր պաշտոնը:~~

Հոդված 44. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում սկսնակ մասնագետի ներգրավումը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում որպես սկսնակ մասնագետ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով կարող է ներգրավվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, և, բացի սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նախատեսված՝ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները հիմնավորող փաստաթուղթ ունենալու պահանջից, սույն օրենքով սահմանված մյուս պահանջները բավարարող անձը:

~~սույն օրենքով սահմանված պահանջները բավարարող կամ բակալավրիատի ուսանող հանդիսացող և սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից բացի, մյուս պահանջները բավարարող անձը:~~

2. Սկսնակ մասնագետները Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի սահմանած կարգով անցնում են սկսնակ մասնագետների համար նախատեսված վերապատրաստման դասընթացներ: Սույն մասում նշված վերապատրաստման դասընթացներն անցնելու արդյունքների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրվում է համապատասխան փաստաթուղթ:

3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում սկսնակ մասնագետները համարվում են քաղաքացիական աշխատանք կատարողներ: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում սկսնակ մասնագետների աշխատանքի ժամանակահատվածը համարվում է հանրային ծառայության ստաժ:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում որպես սկսնակ մասնագետ ներգրավվելու կարգը սահմանում է Հանձնաժողովը:

Հոդված 45. Հանձնաժողովում պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանձնաժողովի նախագահը:

2. Հանձնաժողովի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

3.Հանձնաժողովի տեխնիկական սպասարկում և քաղաքացիական աշխատանք իրականացնող անձանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի գլխավոր քարտուղարը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

43. Հանձնաժողովում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 46. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման և փոխադրման կարգով

1. Հանձնաժողովի նախագահը մինչև երկու տարի ժամկետով կարող է տեղափոխություն կատարել հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր պաշտոն զբաղեցնող ծառայողների միջև, եթե վերջիններս բավարարում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահը կարող է նույն կամ այլ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ծառայողին փոխադրել թափուր պաշտոնի, եթե նա բավարարում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

3. Փոխադրումից հետո թափուր մնացած պաշտոնը կարող է զբաղեցվել սույն օրենքով նախատեսված մրցույթով կամ կադրերի ռեզերվից:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչև սահմանված հիմքի

վերացումը Հանձնաժողովի նախագահը կարող է այլ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ծառայողին փոխադրել այդ պաշտոնին, եթե նա բավարարում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին ժամանակավոր թափուր պաշտոնի փոխադրման դեպքում նրա պարտականությունները կատարում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող ծառայողը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամանակավոր թափուր պաշտոնն առաջանում է՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքում.

2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

4) Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.

5) եռամսյա ժամկետը գերազանցող վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու դեպքում:

~~6. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված փոխադրումն իրականացվում է հավասարազոր կամ տվյալ պաշտոնին հաջորդող մեկ ենթախմբով բարձր Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի:~~

6~~7~~. Տեղափոխությունը, փոխադրումն իրականացվում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի համաձայնությամբ:

7~~8~~. Տեղափոխության և փոխադրման դեպքերում Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

8~~9~~. Տեղափոխության և փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները, ինչպես նաև տեղափոխության և փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու ժամանակ անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է Հանձնաժողովը:

9~~10~~. Սույն հոդվածի իմաստով հավասարազոր պաշտոն է համարվում Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անվանացանկում Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված պաշտոնը:

Հոդված 47. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի առաջխաղացումն առանց մրցույթի

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի (բացառությամբ կադրերի ռեզերվում գտնվող անձանց) առաջխաղացումն առանց մրցույթի իրականացվում է ~~տվյալ պաշտոնի (հաստիքային միավորի) ենթախումբը հաջորդող մեկ ենթախմբով բարձրացնելու եղանակով:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի առաջխաղացման նպատակով Հանձնաժողովում կազմակերպվում և անցկացվում է~~ համապատասխան պաշտոնի առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման գործընթացի արդյունքների հիման վրա:~~, որի արդյունքով որոշվում է ծառայողի առաջխաղացման հարցը:~~

2~~3~~. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայողի առաջխաղացման նպատակով կատարողականի գնահատման գործընթացի կազմակերպման~~ և~~ արդյունքների ամփոփման կարգը և ձևաչափը սահմանում է Հանձնաժողովը:

Հոդված 48. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 49. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պաշտոնից ազատվելը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը պաշտոնից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) հաստիքների կրճատման դեպքում, եթե Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

4) Կառավարության հաստատած հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալու դեպքում.

5) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած ճանաչելու~~հայտարարվելու~~ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

7) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

8) նրա նկատմամբ սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը նշանակելու դեպքում.

9) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդը.

10) սույն օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկն ի հայտ գալու դեպքում.

~~11) երկու տարի անընդմեջ իր մեղքով շարունակական մասնագիտական զարգացման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.~~

112) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան կամ պաշտոնից ազատման դեպքում:

Հոդված 50. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի իրավունքները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողն իրավունք ունի՝

1) ծանոթանալու իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեությանը վերաբերող փաստաթղթերին.

2) իր իրավասության սահմաններում քննարկելու հարցեր և ընդունելու որոշումներ.

3) ~~ստանալու օրենքով նախատեսված վարձատրություն~~աշխատանքի համար ստանալ համարժեք վարձատրություն.

4) սահմանված կարգով մասնակցելու ծառայողական առաջխաղացմանը.

5) մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար սահմանված կարգով մասնակցել վերապատրաստումների՝ ~~սահմանված կարգով վերապատրաստվելու~~ պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին.

6) ներկայացնելու առաջարկություններ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի գործունեության կատարելագործման վերաբերյալ.

7) օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Հոդված 51. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պարտականությունները

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը պարտավոր է՝

1) տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.

4) պահպանել ծառայողական կարգապահությունը.

5) պահպանել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկատվության օգտագործման համար սահմանված պահանջները, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո.

6) պահպանել օրենքով սահմանված սահմանափակումներն ու անհամատեղելիության պահանջները:

Հոդված 52. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու և առանձնակի ցուցանիշների համար Հանձնաժողովի սահմանած կարգով Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի տասնօրյա արձակուրդի տրամադրում:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ Հանձնաժողովի սահմանած կարգով որպես խրախուսանք կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժի հանումը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով սահմանված խրախուսման միջոցները կիրառում է Հանձնաժողովի նախագահը:

4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսման միջոցը կիրառում է կարգապահական տույժ նշանակած պաշտոնատար անձը:

Հոդված 53. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) սահմանված ~~Գործունեության էթիկայի~~վարքագծի կանոնները խախտելը.

2) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

3) ներքին կարգապահական կանոնները խախտելը.

4) օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:

Հոդված 54. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) զգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնից ազատում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Հոդված 55. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից չի անցել վեց ամսից ավելի՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը, ընդ որում՝ նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին:

2. Տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

3. Կարգապահական տույժի մասին Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ երկօրյա ժամկետում:

4. Եթե կարգապահական տույժ նշանակվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա այն համարվում է մարված: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի վրա:

5. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա: Ծառայողական քննության նշանակման և անցկացման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

6. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարան:

Հոդված 56. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին ավելի ցածր պաշտոնի փոխադրելը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողին չի կարելի ավելի ցածր պաշտոնի փոխադրել, բացառությամբ հետևյալ դեպքերի, երբ՝

1) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի դիմումի հիման վրա.

2) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը նշանակելիս.

3) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է հաստիքները կրճատվելիս՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի համաձայնությամբ:

Հոդված 57. Հանձնաժողովում ծառայության առանձնահատկությունները

1. Հանձնաժողովի անդամները և աշխատողներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո չեն կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել իրականացրած վարչական վարույթի հետ կապված, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում թույլ տված չարաշահումների քննության դեպքի:

2. Հանձնաժողովի անդամները և աշխատողները չեն կարող ենթարկվել գույքային, վարչական պատասխանատվության օրենքով նախատեսված իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար:

Հոդված 58. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի և անդամների արձակուրդը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներն ունեն ամենամյա նվազագույն 20 աշխատանքային օր և ամենամյա լրացուցիչ 4 աշխատանքային օր տևողություններով վճարովի արձակուրդների իրավունք:

2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի անդամներին արձակուրդ տրամադրում է Հանձնաժողովի նախագահը կամ օրենքով սահմանված դեպքերում նրան փոխարինող անձը:

Հոդված 59. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության կադրերի ռեզերվը և ծառայողի անձնական գործը

1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության կադրերի ռեզերվը (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) վարում է Հանձնաժողովի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

2. Կադրերի ռեզերվում, իրենց դիմումի համաձայն, գրանցվում են սույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատված ծառայողները, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների:

3. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու մեկանգամյա առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված ծառայողի 65 տարին լրանալը: Ծառայողը իր դիմումի համաձայն կարող է հանվել կադրերի ռեզերվից վաղաժամկետ:

4. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը համարվում է ~~տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում~~ հանրային ծառայության ստաժ: Ծառայողը կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում չի վճարվում:

5. Կադրերի ռեզերվում գրանցվելու դեպքում ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում: Այս դեպքում ծառայողի հետ վերջնահաշվարկը կատարվում է կադրերի ռեզերվում լինելու առավելագույն ժամկետը լրանալուց կամ իր դիմումի համաձայն կադրերի ռեզերվից վաղաժամկետ հանվելուց հետո:

6. Եթե ծառայողը սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է սույն օրենքով նախատեսված ծառայության պաշտոն Հանձնաժողովում, ապա կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում:

7. Ծառայողը հանվում է կադրերի ռեզերվից հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու կամ այլ աշխատանքի անցնելու դեպքում:

8. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակ ծառայողը չունի արձակուրդի իրավունք, և վերջնահաշվարկի մեջ ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը չի հաշվարկվում:

9. Ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու, ~~և~~ կադրերի ռեզերվից հանելու, և կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

10. Ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում: Անձնական գործերի վարման կարգը հաստատում է Հանձնաժողովը:

Գ Լ Ո Ւ Խ 7
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 60. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող ~~տասներորդ~~ օրվանից:

Հոդված 61. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից ~~սույն օրենքով նախատեսված~~ Հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են թափուր և սույն օրենքով նախատեսված մարմինները կարող են մեկնարկել Հանձնաժողովի անդամի թեկնածուների առաջադրման և նշանակման գործընթացը:

2.Հանձնաժողովի առաջին կազմի անդամների թեկնածությունների առաջադրումը —սույն օրենքով նախատեսված մարմիններն ~~Կառավարությունն~~ իրականացնում ենէ սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի մեկնարկից երկու ամսվա ընթացքում: Հանձնաժողովի անդամների առաջին կազմի նշանակումն Ազգային Ժողովն իրականացնում է սույն օրենքով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Հանձնաժողովի առաջին կազմի անդամների պաշտոնավարման ժամկետներն են՝

~~1) մեկ անդամի համար՝ մեկ տարի.~~

1~~2~~) երկու ~~մեկ~~ անդամի համար՝ երկու տարի.

2~~3~~) մեկ անդամի համար՝ երեք տարի.

3~~4~~) մեկ անդամի համար՝ չորս տարի.

4~~5~~) Հանձնաժողովի նախագահի համար՝ հինգ տարի:

4. Հանձնաժողովի առաջին կազմի անդամները երկրորդ անգամ Հանձնաժողովի անդամ կարող են նշանակվել ընդհանուր հիմունքներով, հինգ տարի ժամկետով և համարվում են մեկ ամբողջական ժամկետ պաշտոնավարած:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամկետով Հանձնաժողովի առաջին կազմի երկու անդամներին առաջարկում են համապատասխանաբար Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը, իսկ 2-3-րդ կետերով սահմանված ժամկետները Հանձնաժողովի առաջին կազմի երկու անդամներից ամեն մեկի համար ~~անդամների առաջադրման հետ միաժամանակ~~ առաջարկում է Կառավարությունը՝ առաջադրման հետ միաժամանակ:

6. Հանձնաժողովի առաջին կազմի աշխատանքների կազմակերպման համար տվյալ տարվա պետական բյուջեից ֆինանսական միջոցների հատկացման մասին Կառավարության որոշումը մշակում և Կառավարության հաստատման է ներկայացնում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում: ~~հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի մեկնարկից հետո երկու ամսվա ընթացքում:~~

7. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար աշխատավայր և աշխատանքային պատշաճ պայմաններ ապահովելու համար -Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը առաջարկություն է ներկայացնում վարչապետի աշխատակազմ:

8. Հանձնաժողովը համարվում է ձևավորված, եթե Ազգային ժողովի կողմից նշանակվել են Հանձնաժողովի առնվազն չորս անդամ: Հանձնաժողովն իր կազմավորումից հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատում է իր կանոնադրությունը և կառուցվածքը:

9. Հանձնաժողովի նախագահը պաշտոնի նշանակվելուց հետո՝

1) տասնօրյա ժամկետում հաստատում է Հանձնաժողովի ձևավորման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ հաստիքների ժամանակավոր թվաքանակ, բայց ոչ ավել քան 30 հաստիք, որի մեջ ներառվում է նաև գլխավոր քարտուղարի հաստիքը:

2) Սույն մասի 1-ին կետում նշված հաստիքների հաստատումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարի հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով մինչև տվյալ պաշտոնի համար անցկացվող մրցույթի արդյունքով նշանակում կատարելը՝ այլ ինքնավար մարմնի գլխավոր քարտուղարի համար սահմանված պահանջների հաշվառմամբ.

3) Սույն մասի 1-ին կետում նշված հաստիքների հաստատումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորում է փորձագիտական խմբեր՝ անձնակազմի կառավարման, իրավական ապահովման և կազմակերպաֆինանսական: Փորձագիտական խմբերի համար սահմանում է գործողությունների ժամանակացույց.

4) ապահովում է Հանձնաժողովի հաշվառումն իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնում՝ Հանձնաժողովի կանոնադրությունը հաստատվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

10. Սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով սահմանված փորձագիտական խմբերում նախատեսված պաշտոնները համալրվում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքելու միջոցով: Պայմանագրերը կնքում է գլխավոր քարտուղարը: Տվյալ անձանց վարձատրությունը սահմանվում է քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների երկրորդ ենթախմբին համապատասխանող սանդղակի առաջին մակարդակի հիմնական աշխատավարձի չափով:

11. Հանձնաժողովի կառուցվածքի, պաշտոնների անվանացանկի և հաստիքացուցակի հաստատումից հետո մինչև հաստիքների օրենքով սահմանված կարգով համալրումը Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության հաստիքները զբաղեցվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված

ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով, իսկ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության հաստիքները կարող են զբաղեցվումել են սույն օրենքով սահմանված ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով:

12. Սույն օրենքից բխող իրավական ակտերը համապատասխան մարմիններն ընդունում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

13. Հանձնաժողովը սույն օրենքի ընդունման պահից հետո 1 տարվա ընթացքում մշակում, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջոցով շրջանառության մեջ է դնում սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման արդյունքում պետական բյուջե մուծվող պետական տուրքերի կամ այլ պարտադիր վճարների գանձման դեպքերի, կարգի և չափերի կարգավորման մասին օրենսդրական ակտերի փաթեթ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-1139-20.08.2025-ՊԻ-011/1), «ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»(Կ-1139[1]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» (Կ-1139[2]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[3]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(Կ-1139[4]-20.08.2025-ՊԻ-011/1), «ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[5]-20.08.2025-ՊԻ-011/1), «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[6]-20.08.2025-ՊԻ-011/1), «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[7]-20.08.2025-ՊԻ-011/1), «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[8]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[9]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(Կ-1139[10]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[11]-20.08.2025-ՊԻ-011/1), «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[12]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[13]-20.08.2025-ՊԻ-011/1),

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[14]-20.08.2025-ՊԻ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1139[15]-20.08.2025-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, պատգամավոր Արծվիկ Մինասյան**	6-րդ հոդված 4-րդ մաս	Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասը առաջարկել խմբագրել այնպես, որ բացի կառավարությունից՝ Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունենան Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը: Ըստ այդմ՝ առաջարկել հանձնաժողովի առաջին կազմի կազմավորման շրջափուլում հանձնաժողովի նախագահը պաշտոնավարի 5 տարի, Կառավարության կողմից առաջադրված մյուս երկու անդամները 4 և 3,	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			իսկ իշխող և ընդդիմադիր խմբակցությունների կողմից առաջադրված անդամները 2 տարի ժամկետով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը: Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Կառավարությունը՝ երկու անդամ, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը՝ մեկական անդամ: Ընդ որում, եթե Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավելի են, ապա Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները հանձնաժողովի անդամի համապատասխան թափուր պաշտոնում առաջադրում են նախապես համաձայնեցված մեկ միասնական թեկնածու: Կառավարությունը Հանձնաժողովի անդամների թեկնածուներ առաջադրելիս պետք է առաջնորդվի առավելագույնս տարբեր մասնագիտական կարողություններով և գիտելիքներով օժտված թեկնածուներ առաջադրելու սկզբունքով՝ սույն օրենքով սահմանված իրավասությունների պատշաճ		

			իրականացումն ապահովելու նպատակով:»:		
2.	**ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, պատգամավոր Արծվիկ Մինասյան**	61-րդ հոդված, 3-րդ և 5-րդ մասեր	Հաշվի առնելով, որ առաջարկվում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել այնպես, որ բացի կառավարությունից՝ Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունենան Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը, հետևաբար առաջարկվում է նաև 61-րդ հոդվածի՝ -3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Հանձնաժողովի առաջին կազմի անդամների պաշտոնավարման ժամկետներն են՝ 1) երկու անդամի համար՝ երկու տարի. 2) մեկ անդամի համար՝ երեք տարի. 3) մեկ անդամի համար՝ չորս տարի. 4) Հանձնաժողովի նախագահի համար՝ հինգ տարի:» -5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5.Սույն հոդվածի 3-րդ մասի 1-րդ կետով սահմանված ժամկետով Հանձնաժողովի առաջին կազմի երկու անդամներին առաջարկում են համապատասխանաբար Ազգային ժողովի կառավարող	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը, իսկ 2-3-րդ կետերով սահմանված ժամկետները Հանձնաժողովի առաջին կազմի երկու անդամներից ամեն մեկի համար առաջարկում է Կառավարությունը՝ առաջադրման հետ միաժամանակ: »:		
3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծերի փաթեթում ներառված առանձին օրենքների նախագծերի հոդվածներ (ըստ ձևակերպման առկայության)	Նախագծերի փաթեթում ներառված բոլոր օրենքների նախագծերի ամբողջ տեքստում (ըստ ձևակերպման առկայության) առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարություն», «կառավարություն» ձևակերպումները՝ իրենց հոլովաձևերով փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
4.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծերի փաթեթում ներառված առանձին օրենքների նախագծերի հոդվածներ (ըստ ձևակերպման առկայության)**	Նախագծերի փաթեթի ամբողջ տեքստում առաջարկում ենք «ՀՈԴԱՎԱԾ» բառերը փոխարինել «Հոդված» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դրույթը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

5.	**ՀՀ կառավարություն**	Նախագծերի փաթեթում ներառված առանձին օրենքների նախագծերի հոդվածներ (ըստ ձևակերպման առկայության)	Նախագծերի փաթեթում առաջարկում ենք, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանումը, Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտը հիշատակելիս օգտագործել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
6.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդվածի 2-6-րդ մասեր	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի՝ 2-րդ մասում առաջարկում ենք «իրավաբանական անձ» բառերից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատեր» բառերը՝ հնարավորություն տալով, որպեսզի նշված սուբյեկտները ևս կարողանան կամավոր ստանձնել սույն օրենքից բխող կիբեռանվտանգության ապահովման պարտավորություններ կամ հրաժարվել դրանցից: -3-րդ մասի 1-ին կետում «3» թիվը փոխարինել «4» թվով, իսկ 2-րդ կետից հանել «կառավարման» բառը, քանի որ օրենքը տարածվելու է նաև ՀՀ Սահմանադրությամբ սահմանված այլ	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			պետական մարմինների վրա (մասնավորապես՝ անկախ և ինքնավար մարմինների). տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով: - 4-րդ մասում առաջարկում ենք «աջակցության» բառից առաջ լրացնել «պետական» բառը՝ հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքի անվանումը. 5-րդ մասում «օգտագործվող» բառը փոխարինել «շահագործվող» բառով՝ իմաստային տարընկալումներից խուսափելու համար: 6-րդ մասում «օգտագործմանն» բառը փոխարինել «շահագործմանն» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով:		
7.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ -1-ին և 4-րդ կետերում «անհերքելիությունը (non repudiation)» բառերը փոխարինել «ճշգրտությունը» բառով՝ հիմք ընդունելով միջազգայնորեն ճանաչված CIA Triad-ի accuracy (ճշգրտություն) տերմինը և «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի համահունչ ձևակերպումը. -5-րդ կետում «շրջակա միջավայրի» բառերից հետո լրացնել «, հասարակական կարգի, միջազգային հարաբերությունների և կառավարման շարունակականության	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			(governance continuity)» բառերը՝ հիմք ընդունելով կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման նշված չափանիշների կիրառումը՝ ըստ լավագույն միջազգային փորձի և TAG International-ի կողմից ՀՀ-ի համար կազմված մեթոդոլոգիայի. -7-րդ կետից հանել «կառավարման» բառը, քանի որ օրենքը տարածվելու է նաև ՀՀ Սահմանադրությամբ սահմանված այլ պետական մարմինների վրա (մասնավորապես՝ անկախ և ինքնավար մարմինների). -14րդ կետում «օգտագործման» բառը փոխարինել «շահագործման» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով: - 18-րդ կետում « իրավաբանական կամ ֆիզիկական անձ» բառերը փոխարինել «իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ աշխատանքային պայմանագրով ներգրավված ֆիզիկական անձ» բառերով, «ով» բառը փոխարինել «ովքեր» բառով, «է» բառը «են» բառով՝ հաշվի առնելով այն, որ ֆիզիկական անձինք ինքնուրույն աուդիտ չեն կարող անցնել:		
8.	**ՀՀ կառավարություն**	4-րդ հոդվածի 1-ին մաս	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ - 1-ին կետում «անվտանգության» բառը փոխարինել «կիբեռանվտանգության» բառով, իսկ «կազմակերպում է» բառերից	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հետո լրացնել «այն շահագործող» բառերը: -2-րդ կետում նշված «օգտագործմանն» բառը փոխարինել «շահագործմանն» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով: - 4-րդ կետում «որքան» բառը փոխարինել «քան» բառով, -5-րդ կետում «սկզբունք» բառից հետո լրացնել «(confidentiality)» բառը, իսկ «մուտքի» բառը փոխարինել «հասանելիության» բառով, քանի որ մուտքն ինքնին չի ենթադրում հասանելիության ապահովում: -7-րդ կետում «(non repudiation)» բառերը փոխարինել «(integrity)» բառով և այն գրել «սկզբունք» բառից հետո, իսկ «հուսալիություն, ամբողջականությունը և անհերքելիությունը» բառերը փոխարինել «հուսալիությունը և ճշգրտությունը» բառերով՝ հիմք ընդունելով միջազգայնորեն ճանաչված CIA Triad-ի accuracy (ճշգրտություն) տերմինը և «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի համահունչ ձևակերպումը.: - 8-րդ կետում «սկզբունք» բառից հետո լրացնել «(availability)» բառը՝ ձևակերպման միջազգայնորեն հայտի տարբերակը նշելու համար:		
9.	**ՀՀ կառավարություն**	5-րդ հոդված 1-ին մաս	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի առաջին մասն առաջարկում ենք համարակալել հիմք	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:		
10.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդված 1-ին մաս	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ -1-ին կետում «և դրանից բխող միջոցառումների ծրագրի մշակում» բառերը փոխարինել «կամ գործողությունների ծրագրի մշակում» բառերով՝ հաշվի առնելով, որ ներկայումս վերանայվում է ռազմավարական պլանավորման գործընթացները: Դա հնարավորություն կտա խուսափել հետագայում անվանումների ճիշտ կիրառման խնդիրներից: -7-րդ կետում «համակարգերի» բառը փոխարինել «համակարգերում» բառով: -8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «8) կենսական նշանակության ոլորտներում նույնականացված կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների, դրանք շահագործող ծառայություն մատուցողների և կիբեռանվտանգության պահանջների ապահովման, վերահսկման համար պատասխանատու պետական մարմինների ցանկը սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Կառավարության հաստատմանը.»: Նոր խմբագրությամբ տարբերակը հնարավորություն կտա առավել որոշակի ձևակերպել ընդունվելիք ենթա	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			օրենսդրական նորմատիվ իրավական ակտի անվանումը: - 10-րդ կետում առաջարկում ենք «իրավաբանական անձի» բառերից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերը՝ հնարավորություն տալով, որպեսզի նշված սուբյեկտները ևս կարողանան կամավոր ստանձնել սույն օրենքից բխող կիբեռանվտանգության ապահովման պարտավորություններ կամ հրաժարվել դրանցից:		
11.	**ՀՀ կառավարություն**	7-րդ հոդվածի 2-րդ մաս	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի՝ - 8-րդ կետում առաջարկում ենք «պահպանման մասով» բառերը փոխարինել «պահպանմանն ուղղված» բառերով, «մարմինների» բառից հետո լրացնել «ինչպես նաև իրավաբանական անձանց» բառերը, իսկ «ինչպես նաև» բառերը հանել, ապահովելով նաև մասնավոր հատվածի հետ համագործակցությունը. -9-րդ «3» թիվը փոխարինել «4» թվով՝ ներքին հղումը ճիշտ կատարելու նպատակով. -13-րդ կետում նշված «օգտագործման» բառը փոխարինել «շահագործման» բառով տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով: -16-րդ կետում «օրենքով սահմանված կարգով» բառերը տեղափոխել նախադասության սկիզբ՝ ձևակերպելով	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հետևյալ կերպ՝ «սույն օրենքով սահմանված կարգով»՝ տարընկալումներից խուսափելու նպատակով: - 21-րդ կետում «ներկայացնում է» բառից առաջ լրացնել «Լիազոր մարմնին» բառերը: -28-րդ կետում «կիբեռանվտանգության գործառնությունների կենտրոնի (SOC)» բառերն առաջարկում ենք փոխարինել «կիբեռանվտանգության գործառնությունների կենտրոնի (Security Operations Center (SOC))» բառերով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով: -22-րդ կետում «աջակցության» բառը փոխարինել «աջակցություն է» բառերով: -29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «29) օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման նպատակով ձևավորում է աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ, սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման նպատակով ստեղծում է միջգերատեսչական հանձնաժողով:»: Դա անհրաժեշտ է՝ հիմք ընդունելով չափանիշները կիրառելու համար հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտությունը: Նախագծով նախատեսված սուբյեկտներին		

			նույնականացնելու Ինքնավար մարմնի գործառույթը (իրավասությունը) օրենքում ամրագրելու նպատակով առաջարկվում է -29-րդ կետից հետո լրացնել նոր 30-32-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ. «30) սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման չափանիշների հիման վրա նույնականացնում է կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքները, նախնական մշակում է նույնականացված կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների ցանկն՝ ըստ դրանք շահագործող ծառայություն մատուցողների և ներկայացնում Լիազոր մարմնին. 31) սույն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն նախնական մշակում է կենսական նշանակության ոլորտներում ծառայությունների տեսակների ցանկը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների և ներկայացնում է Լիազոր մարմնին. 32) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:»:		
12.	**ՀՀ կառավարություն**	**7-րդ հոդված 3-րդ և 8-րդ մասեր**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի՝ - 3-րդ մասում առաջարկում ենք «սույն կետի» բառերը փոխարինել «սույն մասի» բառերով, «միջազգային կազմակերպություններին» բառերից հետո	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			լրացնել «հաստատված ընթացակարգերին համապատասխան» բառերը, «փոխանցել» բառից հետո լրացնել «բացառապես» բառը: 5-րդ մասում «3»թիվը փոխարինել «4» թվով, -հիմք ընդունելով SS ակտիվների կառավարման միասնական մոտեցման ձևավորման, շահագործման կառուցվածքի հստակեցման հայեցակարգը՝ առաջարկվում է լրացնել նոր 8-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Ինքնավար մարմինը տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի ստեղծման և կառավարման համակարգի ներդրման Կառավարության կողմից սահմանած կարգին համապատասխան դրանում նշված մարմիններին և կազմակերպություններին տրամադրում է գույքագրման գործիքակազմ, իրականացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների ռեեստրի աուդիտ, ինչպես նաև կատարում է մեթոդական վերլուծություն:»:		
13.	**ՀՀ կառավարություն**	**9-րդ հոդված 3-րդ մաս 6-րդ կետ**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-ին մասի 6-րդ կետում նշված «օգտագործման» բառը փոխարինել «շահագործման» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
14.	**ՀՀ կառավարություն**	**10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասեր**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի՝ 1-ին մասն առաջարկում ենք շարադրել	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հետևյալ խմբագրությամբ. -«1. Ծառայություն մատուցողը, հիմք ընդունելով սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված իր տեղեկատվական համակարգերի ռիսկերի գնահատումը, ռիսկերի գնահատման սանդղակը և կիբեռանվտանգության գործառնության (operational) մոդելը, պարտավոր է նշանակել կիբեռանվտանգության մասնագետ կամ մասնագետներ, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կիբեռանվտանգության ապահովումը ամբողջությամբ կիբեռանվտանգության ապահովման ծառայություն մատուցողին պատվիրակելու դեպքի:»՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մասնագետների հավաքագրումը պետք է կատարվի ծառայություն մատուցողի ռիսկայնության մակարդակին համապատասխան: -2-րդ մասում առաջարկում ենք «կարգը» բառից հետո լրացնել «և որակավորման ճանաչման կարգը» բառերը, իսկ «կարող է սահմանել» բառերը փոխարինել «սահմանում է» բառերով:		
15.	**ՀՀ կառավարություն**	**11-րդ հոդված 1-ին մաս**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1-ին, 2-րդ և 7-րդ կետերում նշված «օգտագործման» բառը փոխարինել «շահագործման» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			նպատակով: - 2-րդ կետի վերջում «,» կետադրական նշանն առաջարկում ենք փոխարինել «:» կետադրական նշանով:		
16.	**ՀՀ կառավարություն**	**13-րդ հոդվածի 4-րդ, 8-րդ և 10-րդ մաս**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի՝ -4-րդ մասում նշված «տիրապետող» բառը փոխարինել «շահագործող» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով: - 8-րդ մասում «տեղեկություն» բառից հետո լրացնել «ստանալիս կամ» բառերը: - 10-րդ մասում առաջարկում ենք «պահանջներին և» բառերը փոխարինել «պահանջներին կամ համապատասխանում են նույն օրենքով սահմանված տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողներին ներկայացվող հիմնական» բառերը՝ հաշվի առնելով, որ սահմանափակումներն այն հատկանիշներն են, որոնք պետք է բացակայեն: Նույն մասում առաջարկում ենք «ինչպես նաև» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
17.	**ՀՀ կառավարություն**	**14-րդ հոդված**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի՝ վերնագրում և առաջին մասում նշված «օգտագործմանը» բառերը փոխարինել «շահագործումը» բառերով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

18.	**ՀՀ կառավարություն**	**16-րդ հոդվածի 1-ից 7-րդ մասեր**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի՝ -վերնագրում «շահագորշվող» բառը փոխարինել «շահագործվող» բառով: -1-ին մասում «Լիազոր» բառր փոխարինել «Ինքնավար» բառով: -1-ին մասի 1-ին կետում «նշանակության» բառից հետո լրացնել «ոլորտներում» բառը: -1-ին մասի 2-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) կիբեռմիջադեպի տևողությունը և վտանգավորության աստիճանը տնտեսական ակտիվության, շրջակա միջավայրի, հասարակական կարգի, բնակչության բնականոն կենսագործունեության ապահովման համար, միջազգային հարաբերությունների, կառավարման շարունակականության (governance continuity), ազգային անվտանգության կամ բնակչության առողջության վրա.»՝ հիմք ընդունելով կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման նշված չափանիշների կիրառումը՝ ըստ լավագույն միջազգային փորձի և TAG International-ի կողմից ՀՀ-ի համար կազմված մեթոդոլոգիայի. - 2-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Կենսական նշանակության ոլորտներում նույնականացված կրիտիկական	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			տեղեկատվական ենթակառուցվածքների, դրանք շահագործող ծառայություն մատուցողների և կիբեռանվտանգության պահանջների ապահովման, վերահսկման համար պատասխանատու պետական մարմինների ցանկը հաստատում է Կառավարությունը:»: Առաջարկվող խմբագրությունը նպատակ է հետապնդում առավել հստակեցնելու կարգավորումը: Հիմք ընդունելով միջազգայնորեն և NIS2 դիրեկտիվով առանձնահատուկ սահմանված սուբյեկտների ցանկը՝ 3-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Օրենքի ուժով, առանց նույնականացման չափանիշների կիրառման, կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներ են համարվում. 1) որակավորված վստահության ծառայությունների մատուցման համար շահագործվող տեղեկատվական համակարգերը, 2) բարձր մակարդակի դոմեյնային անունների ռեգիստրի ծառայությունների մատուցման համար շահագործվող տեղեկատվական համակարգերը, 3) դոմեյնային անունների համակարգի (DNS) ծառայությունների մատուցման համար շահագործվող տեղեկատվական համակարգերը,		

			4) պետական մարմինների, օրենքով սահմանված կարգով խոշորացված համայնքների, Երևանի և Գյումրու համայնքների կողմից հանրությանը ծառայությունների մատուցման համար շահագործվող տեղեկատվական համակարգերը, 5) էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների կամ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար շահագործվող տեղեկատվական համակարգերը, որոնք շահագործող իրավաբանական անձինք համապատասխանում են «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով նախատեսված միջին ձեռնարկատիրության սուբյեկտների դասակարգման չափանիշներին:»: 3-րդ մասով նախատեսված կարգավորումն էլ առաջարկում ենք նախատեսել 4-րդ մասով, իսկ մյուս մասերի համարակալումն առաջարկում ենք փոփոխել՝ ապահովելով հաջորդական համարակալում: լրամշակված 7-րդ մասում «5» թիվը փոխարինել «6» թվով:		
19.	**ՀՀ կառավարություն**	**17-րդ հոդված 1-ին մաս**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդվածի՝ - 1-րդ մասի 1-ին պարբերությունում «դրա» բառն առաջարկում ենք փոխարինել «դրանց» բառով.	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

20.	**ՀՀ կառավարություն**	**19-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 19-րդ հոդվածի 1-մասում «ապահովումը» բառից հետո լրացնել «կամ դրա մի մասը» բառերը: Հիմք ընդունելով այն, որ ֆիզիկական անձինք չեն կարող աուդիտ անցնել՝ նույն հոդվածի 3-րդ մասում «ծառայություն մատուցողը պարտավոր է» բառերը փոխարինել «ծառայություն մատուցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են» բառերով, իսկ «աուդիտ:» բառից հետո լրացնել «, որի արդյունքում գնահատվում է կիբեռանվտանգության ապահովման ծառայություն մատուցողի ներքին կանոնակարգերի և դրանց կիրարկման համապատասխանությունը սույն օրենքի պահանջներին:», որպեսզի հստակեցվի որ վերջիններիս աուդիտի արդյունքում ստուգվում է իրենց ներքին կանոնակարգերի համապատասխանությունը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
21.	**ՀՀ կառավարություն**	**22-րդ հոդված 4-րդ և 7-րդ մաս**	Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունում «Ինքնավար մարմնի» բառից հետո լրացնել «կողմից» բառը: -4-րդ մասից սկսած վերնայել 22-րդ հոդվածի մասերի համարակալումը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

22.	**ՀՀ կառավարություն**	**23-րդ հոդված 1-ին մաս**	Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «պատասխանատվության» բառից առաջ լրացնել «ծառայություն մատուցողի նկատմամբ» բառերը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
23.	**ՀՀ կառավարություն**	**25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասեր**	«Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի՝ 1-ին մասի 1-ին կետում առաջարկում ենք «հետո» բառը փոխարինել «պահից» բառով: - 1-ին մասի 2-րդ կետում առաջարկում եմ «3-րդ մասի 2-րդ, 4-6-րդ» ձևակերպումը փոխարինել « 3-րդ մասի 1-ին, 4-5-րդ» ձևակերպմամբ, իսկ «հետո» բառն առաջարկում ենք փոխարինել «պահից» բառով: -2-րդ մասի «ովքեր» բառը փոխարինել «որոնք» բառով: -5-րդ մասում «կիրառվող» բառը փոխարինել «շահագործվող» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
24.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի առանձին հոդվածներ (ըստ ձևակերպման առկայության)	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծում առաջարկում ենք վերանայել ամբողջ տեքստում կիրառված և/կամ ձևակերպումները՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությանը և հաշվի առնելով, որ «և/կամ» գրելաձեւը կիրառելի չէ:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

25.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդվածի 1-ին մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում առաջարկում ենք «(այսուհետ՝ Ինքնավար մարմին)» բառերը հանել, քանզի օրենքի հետագա տեքստում կիրառվելու է սահմանված հասկացությունը, այն է՝ «Ինքնավար մարմին»:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
26.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդվածի 1-ին մասի և առանձին հոդվածներ (ըստ ձևակերպման առկայության)	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի մի շարք հոդվածներում կիրառվում է «հանրային տեղեկություն» հասկացությունը՝ համապատասխան հոլովաձևերով: Մինչդեռ «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «հանրային տեղեկություն» հասկացության համար սահմանվել է կրճատ տարբերակ, այն է՝ «(այսուհետ՝ տեղեկություն)»: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծում կիրառել մեկ միատեսակ ձևակերպում:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
27.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդված 3-րդ և 5-րդ մասեր	Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի՝ -3-րդ մասում «Նշված գումարի» բառերը առաջարկում ենք փոխարինել «Այդ ծախսերի» բառերով՝ դրույթի բովանդակությունն առավել հստակ սահմանելու համար: - 5-րդ մասում «պահանջում է » բառից հետո լրացնել «ստանալ» բառը՝ դրույթի	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			բովանդակությունն առավել հստակ սահմանելու համար:		
28.	**ՀՀ կառավարություն**	8-րդ հոդվածի 1-ին մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք՝ - «անկախ և ինքնավար պետական մարմինները» բառերը փոխարինել «անկախ պետական և ինքնավար մարմինները» բառերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունները, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը, - «համայնքերը» բառից հետո լրացնել «, Երևան և Գյումրի համայնքները» բառերով, քանի որ Երևան և Գյումրի համայնքները չեն հանդիսանում օրենքով սահմանված կարգով խոշորացված համայնքներ և դուրս էին մնացել նշված դրույթի կարգավորման շրջանակից:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
29.	**ՀՀ կառավարություն**	9-րդ հոդված 1-ին մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք՝ - «հարթակում» բառից հետո լրացնել « ընդգրկված» բառը՝ դրույթի բովանդակությունն ամբողջացնելու համար, - «չափորոշիչները,» բառը և կետադրական	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			նշանը հանել, -«պահանջները, շտեմարանները տեղեկությունների մուտքի հարթակին միացնելու կարգը» բառերը փոխարինել «պահանջները» բառով, քանի որ տեղեկությունների մուտքի միասնական հարթակն, ըստ էության, ապահովում է օգտատերերին թվային ծառայությունների մատուցման միասնական հարթակ, և առանձին շտեմարաններն այդ հարթակին միացնելու անհրաժեշտությունը բացակայում է:		
30.	**ՀՀ կառավարություն**	11-րդ հոդվածի 4-րդ մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք «առաջին» բառը փոխարինել «1-ին» թվով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
31.	**ՀՀ կառավարություն**	12-րդ հոդվածի 4-րդ մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք «կան» բառը փոխարինել «կամ այդ» բառով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
32.	**ՀՀ կառավարություն**	16-րդ հոդվածի 1-ին մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «15-րդ» թվից առաջ լրացնել «սույն օրենքի» բառերը՝ կիրառված հղման հստակությունն ապահովելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
33.	**ՀՀ կառավարություն**	16-րդ հոդվածի 1-ին մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «Նշված» բառը փոխարինել «Տվյալների շտեմարանի կառավարչի հետ կնքվող» բառերով՝ դրույթի	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հստակությունն ապահովելու նպատակով:		
34.	**ՀՀ կառավարություն**	20-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասեր	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 20-րդ հոդվածի՝ - 4-րդ մասում առաջարկում ենք «սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասում նշված տվյալների շտեմարանների» բառերը փոխարինել «ոչ պետական տեղեկատվական համակարգի՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասում նշված տվյալների շտեմարանների» բառերով՝ հղման հստակությունն ապահովելու նպատակով: - 7-րդ մասում առաջարկում ենք «Նշված» բառը փոխարինել «Տվյալների փոխանակման շերտին միանալու» բառերով՝ դրույթի հստակությունն ապահովելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
35.	**ՀՀ կառավարություն**	24-րդ հոդվածի 3-րդ մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք «կայքում» բառը փոխարինել «կայքէջում» բառով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
36.	**ՀՀ կառավարություն**	26-րդ հոդվածի 2-րդ մաս	«Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք « վեբ-կայքերը» բառերը փոխարինել «կայքէջերը» բառով՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

37.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի ամբողջ տեքստում	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծում առաջարկում ենք համասեռ հոդվածները միավորել համապատասխան գլուխներում՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումները:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
38.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված, 1-ին մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «իրավասությունների» բառից հետո լրացնել «, վերահսկողության» բառը՝ նկատի ունենալով, որ հիշյալ օրենքի նախագծի կարգավորման առարկան ներառում է նաև վերահսկողության հետ կապված հարաբերությունները:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
39.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկում ենք «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի՝ - 2-րդ մասում «գործառույթները» բառից հետո լրացնել՝ ««Կիբեռանվտանգության մասին» օրենքով նախատեսված» բառերը՝ նկատի ունենալով, որ «կարգավորող և վերահսկող այլ մարմիններ» հասկացության սահմանումը տրված է նշված օրենքով: - 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերում, 3-րդ կետում, նույն կետի «ա» և «բ» ենթակետերում «կարգավորող և վերահսկող մարմիններ» ձևակերպումը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կարգավորող և վերահսկող այլ	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			մարմիններ» ձևակերպմամբ՝ համապատասխան հոլովաձևերով՝ ձևակերպումների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով: - 2-րդ մասում «համագործակցությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա» բառերը փոխարինել «համագործակցության ձևերն են» բառերով՝ հաշվի առնելով, որ նույն մասի կետերով նախատեսվող կարգավորումները իրենց բնույթով «սկզբունք» չեն հանդիսանում: - 2-րդ մասի 1-ին կետում «մարմն» բառն առաջարկում ենք փոխարինել «մարմնին» բառով՝ բաց թողնված տառը լրացնելու նպատակով:		
40.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մաս**	Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից հանել «ունեն» բառը, քանի որ 3-րդ մասում արդեն իսկ առկա է «որն ունի» ձևակերպումը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
41.	**ՀՀ կառավարություն**	**6-րդ հոդված 3, 5-րդ մասեր**	Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի՝ 3-րդ մասի 1-ին կետում «հոդվածով» բառն առաջարկում ենք փոխարինել «հոդվածի 3-րդ մասով» բառերով՝ նկատի ունենալով, որ համապատասխան պահանջները սահմանված են սույն օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասով: 3-րդ մասում լրացնել նոր՝ 7-րդ ենթակետ՝	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հետևյալ բովանդակությամբ. «7) վերջին հինգ տարիների ընթացքում ունեցել է Հանձնաժողովի գործունեության ոլորտներում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):»: Նման պահանջի սահմանումը հնարավորություն կտա ի սկզբանե խուսափել շահերի բախման հնարավոր դեպքերից: 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պաշտոնում թեկնածուն առաջադրվում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահ կամ անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Կառավարությանը կամ Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում: Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված՝		

			Հանձնաժողովի անդամի պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:»՝ հաշվի առնելով, որ փոփոխվել են Հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրելու մարմինների կազմը: 6-րդ մասում լրացնել նոր՝ երկրորդ նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Եթե Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:»՝ նպատակ ունենալով, որպեսզի ԱԺ-ի կողմից որոշում չընդունելու դեպքում պահպանվի Հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրելու տվյալ մարմնի իրավուքը:»:		
42.	**ՀՀ կառավարություն**	**7-րդ հոդված 2-րդ մաս**	Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի՝ -2-րդ մասում առաջարկում ենք «Հանձնաժողովի» բառից առաջ լրացնել «Եթե» բառը, «նշանակումը» բառից հետո լրացնել «կատարվում է» բառերը, իսկ «կատարվելու դեպքում» բառերը փոխարինել «, ապա» բառով՝ իմաստային հստակեցում մտցնելու համար:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

43.	**ՀՀ կառավարություն**	**10-րդ հոդված 1-ին մաս**	Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված 1-ին մասի՝ -6-րդ կետից առաջարկում ենք հանել «, իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ» բառերը, քանի որ նույն մասի 8-րդ կետում առաջարկվում է լրացնել, որ հանձնաժողովի նախագահը իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ: - 8-րդ կետում «օրենքով» բառից առաջ առաջարկում ենք լրացնել «սույն» բառը, իսկ «օրենքով» բառից հետո լրացնել «այլ օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով» բառերը՝ կարգավորման հստակ շարադրանք ապահովելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
44.	**ՀՀ կառավարություն**	12-րդ հոդվածի վերնագիր, 6-րդ և 7-րդ մասեր	Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածի՝ -վերնագրում «դադարեցումը» բառից հետո լրացնել «և կասեցումը» բառերը՝ նկատի ունենալով, որ հնարավոր է առաջանա Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցնելու անհրաժեշտության օբյեկտիվ իրավիճակ, որն առաջարկվում է կանոնակարգել այս հոդվածով: - 6-րդ մասից առաջարկում ենք հանել	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			«վարչապետին և» բառերը, իսկ «Ազգային ժողովի նախագահին» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև այն մարմնին, որն իրավասու է տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու, միաժամանակ՝» հաշվի առնելով, որ առաջարկվում է փոփոխել Հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրելու մարմինների կազմը: - 7-րդ մասում առաջարկում ենք կարգավորումներ նախատեսել նաև Հանձնաժողովի անդամի լիազորությունների կասեցման վերաբերյալ և լրացնել նոր՝ 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցվում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացության ընդունման պահից մինչև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով որոշման ընդունումը:»:		
45.	**ՀՀ կառավարություն**	13-րդ հոդվածի 1-ին մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «մասնագիտական» բառից հետո լրացնել «կառուցվածքային» բառը, քանի որ կարգավորող օրենսդրությամբ կիրառվում է «կառուցվածքային ստորաբաժանում» ձևակերպումը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

46.	**ՀՀ կառավարություն**	14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի՝ -1-ին մասում առաջարկում ենք «հիմնական» բառից առաջ լրացնել «իսկ» բառը, իսկ «մասնագիտական» բառից հետո «կառուցվածքային» բառը, քանի որ կարգավորող օրենսդրությամբ կիրառվում է «կառուցվածքային ստորաբաժանում» ձևակերպումը: -2-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը հանել՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: -2-րդ մասում «կոմպետենցիաների» բառից հետո հանել «(գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի պարտադիր պահանջների ամբողջություն)» բառերը, քանի որ նշված հասկացության սահմանումը տրված է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում: - 4-րդ մասում «Հանձնաժողովում» բառը փոխարինել «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում» բառերով, իսկ «պարգևատրումների» բառը փոխարինել «պարգևատրման» բառով՝ կարգավորման հստակեցման նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
47.	**ՀՀ կառավարություն**	**16-րդ հոդվածի 1-ին մաս**	Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի	Կատարվել է համապատասխան	**Ընդունվել է**

			նախագծի 16-րդ հոդվածի՝ - 1-ին մասի 6-րդ կետում առաջարկում ենք «իրականացնում» բառը փոխարինել «կազմակերպում» բառով, իսկ «հոսթինգ» բառից հետո լրացնել «օգտագործումը» բառը՝ կարգավորման հստակեցման նպատակով: -2-րդ մասում առաջարկում ենք «նորմատիվ» բառից հետո լրացնել «իրավական ակտեր» բառերը՝ հաշվի առնելով, որ օրենքով լիազորված լինելու դեպքում նորմատիվ իրավական ակտը հիշատակելիս կիրառվում է «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը:	փոփոխություն:	
48.	**ՀՀ կառավարություն**	18-րդ հոդված, 5-րդ մաս, 11-13-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 18-րդ հոդվածի՝ -5-րդ մասում առաջարկում ենք «երեք» բառը փոխարինել «չորս» բառով՝ հաշվի առնելով, որ առաջարկվում է Հանձնաժողովի նիստերում որոշումները և եզրակացություններն ընդունվեն Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: - 1-ին մասում թեև նշվում է Հանձնաժողովի դռնփակ նիստ գումարելու հնարավորության մասին, սակայն մի շարք ընթացակարգային հարցեր կարգավորված չեն: Հետևաբար, առաջարկվում է 18-րդ հոդվածում կարգավորումներ նախատեսել դռնփակ նիստ գումարելու ընթացակարգային	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հարցեր՝ լրացնելով նոր 11-13-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ. «11. Շահագրգիռ անձանց շահերի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով Հանձնաժողովը որոշում է կայացնում նիստը կամ դրա առանձին մասն անցկացնել դռնփակ: 12. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին հարցը քննարկվում է դռնփակ: 13. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին որոշում կայացվելու դեպքում նիստին կամ դրա առանձին մասին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է Հանձնաժողովի նախագահը:»:		
49.	**ՀՀ կառավարություն**	20-րդ հոդված 1-ին մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք փոխել Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակը՝ առաջարկելով, որ դրանք ընդունվեն Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հետևաբար առաջարկվում է 20-րդ հոդվածի 1-ին մասում «նիստին մասնակցող անդամների» բառերը փոխարինել	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			«Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի» բառերով:		
50.	**ՀՀ կառավարություն**	25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի՝ - 1-ին մասում առաջարկում ենք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին հղում կատարելիս առաջարկում ենք «օրենքով» բառին նախորդող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: -2-րդ մասում «Հանձնաժաղովի» բառն առաջարկում ենք փոխարինել «Հանձնաժողովի» բառով՝ տառասխալն ուղղելու նպատակով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
51.	**ՀՀ կառավարություն**	28-րդ հոդվածի վերնագիր, 1-4-րդ մասեր, 8-րդ մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 28-րդ հոդվածի՝ -վերնագրում «և համապատասխանության գնահատում» բառերն առաջարկում ենք հանել, քանի որ համապատասխանության գնահատում իրականացնելը վերահսկողության միջոց է: 1-ին մասում «3» թիվն առաջարկում եմ փոխարինել «2» թվով՝ ներքին հղումները ճիշտ կատարելու համար:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			2-րդ և 3-րդ մասերը առաջարկում ենք տեղերով միմյանց հետ փոխել՝ մտքի տրամաբանական հաջորդականությունը ապահովելու նպատակով, 3-րդ մասից հանել «այլ» բառը՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով, 4-րդ մասից «վերահսկող» բառից հետո լրացնել «այլ» բառը՝ տերմինների միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով, 8-րդ մասում «3» թիվը փոխարինել «2» թվով, իսկ «այլ» բառը հանել՝ ճիշտ ներքին հղում կատարելու և տերմինների միտեսակ կիրառություն ապահովելու նպատակով:		
52.	**ՀՀ կառավարություն**	30-րդ հոդված 2-րդ մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 30-րդ հոդվածի՝ -1-ին մասի 2-րդ կետում «պարտավոր է» բառերն առաջարկում ենք հանել՝ իմպերատիվ-հրամայական ոճը պահպանելու համար: - 2-րդ մասում երկրորդ նախադասությունն առաջարկում եմ շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գնահատող խմբի անդամները, հրավերի առկայության դեպքում, կարող են մասնակցել վերահսկվող իրավաբանական անձի կառավարման մարմինների նիստերին, ժողովներին և քննարկումներին, ներկայացնել համապատասխանության գնահատման արդյունքները, հնարավոր	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հետևանքները:»՝ հիմք ընդունելով, որ գնահատող խմբի անդամները կարող են մասնացել նիստերին միայն այդպիսի հրավեր ունենալու դեպքում:		
53.	**ՀՀ Կառավարություն**	35-րդ հոդված 1-ին մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 35-րդ հոդված 1-ին մասից հանել «կամ համապատասխանության գնահատման արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելը» բառերը, քան որ արձանագրություն չստորագրելը չի կարող դիտարկվել որպես խոչընդոտում:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
54.	**ՀՀ կառավարություն**	36-րդ հոդված 1-ին և 5-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 36-րդ հոդվածի՝ - 1-ին մասում առաջարկում ենք «այն» բառը փոխարինել «այլ» բառով: -5-րդ մասում «կառավարչին:» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տեղեկատվական համակարգի կառավարչի համաձայնությամբ մշտադիտարկում իրականացնելու դեպքի:» բառերը՝ ներքին հակասություններից խուսափելու համար:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
55.	**ՀՀ կառավարություն**	40-րդ հոդված 1-ին և 2-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 40-րդ հոդվածի՝ 1-ին մասն առաջարկում ենք հանել, քանի որ կրկնվում է «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 4-	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			դդ մասի կարգավորումը, իսկ մյուս մասերի համարակալումը փոփոխել: 2-րդ մասում առաջարկում ենք «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով» բառերը նախատեսել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ» բառերից առաջ՝ հաշվի առնելով, որ իրավական պրակտիկայի տեսանկյունից «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը պետք է կիրառվի նախքան ՀՀ աշխատանքային օրենսգիրքը: Նշված նաև բխում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից: Հաշվի առնելով տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայությունն առանձին ծառայության տեսակ է, անհրաժեշտ է կարգավորում նախատեսել, թե տվյալ ծառայության յուրաքանչյուր պաշտոնի անձնագրի չափանիշները և առանձին պաշտոնների անձնագրերը ով է հաստատում: Հետևաբար, առաջարկվում է լրացնել նոր՝ 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «3.Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարագիր), որը հաստատում է գլխավոր քարտուղարը: Տեղեկատվական համակարգերի		

			կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անձնագրերի չափանիշները հաստատում է Հանձնաժողովի նախագահը:»:		
56.	**ՀՀ կառավարություն**	41-րդ հոդված	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 41-րդ հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «**Հոդված 41. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների պաշտոնների համակարգը** 1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից: 2. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները դասակարգվում են երեք խմբերի, որոնցից յուրաքանչյուրը դասակարգվում է երեք ենթախմբերի: 3.Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			պաշտոնների անվանումները, խմբերը և ենթախմբերը սահմանում է Հանձնաժողովը՝ որի համար սույն օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասում նշված որակավորումները կրում են կողմնորոշիչ բնույթ:»: Նշված փոփոխությունները պայմանավորված է նրանով, որ նոր խմբագրությամբ շարադրվող հոդվածի 1-ին մասով նկարագրված պահանջներին համապատասխանելու համար մասնագետները պետք է անցնեն միջազգայնորեն ճանաչում գտած որակավորումներ, որոնք չեն համապատասխանում պաշտոնների ենթախմբերին: Դրա համար առաջարկվում է օրենքով ամրագրել պաշտոնների խմբերի և ենթախմբերի քանակը, իսկ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների անվանումները, խմբերը և ենթախմբերը կսահմանի Հանձնաժողովը հիմք է ընդունելով 41-րդ և 43-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջները:		
57.	**ՀՀ կառավարություն**	42-րդ հոդված 1-ին մասի	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասն առաջարկում եմ շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի պաշտոն զբաղեցնելու համար Հայաստանի	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			Հանրապետության քաղաքացին. 1) պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն, բացառությամբ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնների ամենաբարձր խմբի ամենաբարձր ենթախմբի պաշտոնների, որոնք զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն. 2) պետք է տիրապետի հայերենին. 3) պետք է բավարարի տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին և առկա չլինի պաշտոնի նշանակման համար օրենքով սահմանված սահմանափակումները. 4) պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքերում պետք է ունենա պահանջվող գիտելիքները ու կոմպետենցիաները հիմնավորող փաստաթուղթ (օրինակ՝ որակավորում, սերտիֆիկատ և այլն)։»։ Նման մոտեցմամբ հնարավորություն կստեղծվի որպեսզի միջազգայնորեն ճանաչում ունեցող և մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները հիմնավորող փաստաթուղթ ունեցող մասնագետները դիմեն Հանձնաժողովի մասնագիտական ստորաբաժանումներում աշխատանքի անցնելու համար, իսկ եթե հավակնեն տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության		

			պաշտոնների ամենաբարձր խմբի ամենաբարձր ենթախմբի պաշտոնների, ապա բարձրագույն կրթություն ունենալու պահանջը պարտադիր կհամարվի:		
58.	**ՀՀ կառավարություն**	43-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 43-րդ հոդվածի՝ -3-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «3. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները համալրվում են կա՛մ մրցութային կարգով, կա՛մ փոխադրման կարգով , կա՛մ կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգով: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները մրցութային կարգով համալրելու կարգը և պայմանները սահմանում է Հանձնաժողովը:»: 3-րդ մասում առաջարկվող խմբագրումը նպատակ ունի հստակեցնել ինքնավար մարմնի լիազորող նորմի շրջանակը՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով: - 6-րդ մասն առաջարկում ենք հանել: 6-րդ մասով նախատեսված հարաբերությունների կարգավորումը թողնվել է ինքնավար մարմնի հաստատմանը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

59.	**ՀՀ կառավարություն**	44-րդ հոդված 1-ին և 2-րդ, 4-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 44-րդ հոդվածի՝ - 1-ին մասում առաջարկում ենք «սույն օրենքով սահմանված պահանջները բավարարող կամ բակալավրիատի ուսանող հանդիսացող և սույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից բացի, մյուս պահանջները բավարարող անձը:» բառերը փոխարինել «և, բացի սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նախատեսված՝ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները հիմնավորող փաստաթուղթ ունենալու պահանջից, սույն օրենքով սահմանված մյուս պահանջները բավարարող անձը:» բառերով՝ հաշվի առնելով 46-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող փոփոխությունը: -2-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն մասում նշված վերապատրաստման դասընթացներն անցնելու արդյունքների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրվում է համապատասխան փաստաթուղթ:»: Առաջարկվող լրացումը հստակեցնում է ինքնավար մարմնի լիազորությունների և սկսնակ մասնագետների իրավունքների շրջանակը: 3-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Տեղեկատվական համակարգերի	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			կարգավորման մարմնում սկսնակ մասնագետների աշխատանքի ժամանակահատվածը համարվում է հանրային ծառայության ստաժ:»: Նշված լրացմամբ երաշխիքներ է ստեղծվում սկսնակ մասնագետների համար, որը համահունչ է ինչպես ՀՀ աշխատանքային օրենսդրության, այնպես էլ «Հանրային ծառայության մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Լրացնել նոր՝ 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «4. Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում որպես սկսնակ մասնագետ ներգրավվելու կարգը սահմանում է Հանձնաժողովը:»: 4-րդ մասում կատարվող լրացումը հստակեցնում է ինքնավար մարմնի գործառույթների շրջանակը և լիազորում է ընդունել իրավական ակտ, որը նախկին տարբերակում բացակայում էր:		
60.	**ՀՀ կառավարություն**	45-րդ հոդված 2-րդ մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 45-րդ հոդվածի՝ - 2-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «2. Հանձնաժողովի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:»՝	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			ընթացակարգը հստակեցնելու համար: 2-րդ մասով նախատեսված կարգավորումը շարադրել երրորդ մասում և համապատասխանաբար փոփոխել մյուս մասերի համարակալումը:		
61.	**ՀՀ կառավարություն**	46-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասեր մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 46-րդ հոդվածի՝ -6-րդ մասն առաջարկում ենք հանել: Նշված հարաբերության կարգավորումը թողնվել է ինքնավար մարմնին, քանի ՀՀ օրենքներով միասնական կարգավորում չկա, մոտեցումները տարբեր են ըստ ծառայության տեսակների: - 7-րդ մասից սկսել փոփոխել մասերի հաջորդական համարակալումը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
62.	**ՀՀ կառավարություն**	47-րդ հոդված 1-3-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 47-րդ հոդվածի՝ -1-ին և 2-րդ մասերն առաջարկում ենք միավորել և շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի (բացառությամբ կադրերի ռեզերվում գտնվող անձանց) առաջխաղացումն առանց մրցույթի իրականացվում է համապատասխան պաշտոնի առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման գործընթացի արդյունքների հիման վրա:»՝ հաշվի առնելով 45-րդ	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հոդվածում առաջարկվող փոփոխությունները: -3-րդ մասի համարակալումը փոխել և «կազմակերպման» բառից հետո հանել «և» շաղկապը:		
63.	**ՀՀ կառավարություն**	49-րդ հոդված 1-ին և 2-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 49-րդ հոդվածի 1-ին մասի՝ 6-րդ կետում «մահացած հայտարարվելու» բառերն անհրաժեշտ է փոխարինել «մահացած ճանաչելու» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 47-րդ հոդվածը: -11-րդ կետն առաջարկում ենք հանել, քանի որ 11-րդ կետի պահանջը տեխնիկական վրիպակ արդյունքում էր նախատեսվել: Այս օրենքում ծառայողների նկատմամբ սահմանված չէ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ հավաքելու պայանջ, հետևաբար, չի կարող հիմք հանդիսանալ պաշտոնից ազատման համար: 2-րդ մասում «մահվան» բառից հետո առաջարկում ենք լրացնել «կամ պաշտոնից ազատման» բառերը՝ հաշվի առնելով, որ ծառայողին պաշտոնից ազատելուց ևս դադարում են նրա պարտականությունները:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
64.	**ՀՀ կառավարություն**	50-րդ հոդված 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 50-րդ հոդվածի 1-ին մասի՝		

			-3-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «3) աշխատանքի համար ստանալ համարժեք վարձատրություն.» -5-րդ կետում «սահմանված կարգով վերապատրաստվելու» բառերը փոխարինել «մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար սահմանված կարգով մասնակցել վերապատրաստումների՝» բառերով՝ առավել հստակեցնելով կարգավորումը:		
65.	**ՀՀ կառավարություն**	53-րդ հոդված 1-ին մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «գործունեության էթիկայի» բառերը փոխարինել «սահմանված վարքագծի» բառերով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
66.	**ՀՀ կառավարություն**	58-րդ հոդվածի վերնագիր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 58-րդ հոդվածի վերնագրում առաջարկում ենք «ծառայողի» բառից հետո լրացնել «և անդամների» բառերը՝ նկատի ունենալով նշված հոդվածի 2-րդ մասը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
67.	**ՀՀ կառավարություն**	59-րդ հոդված 4-րդ և 9-րդ մաեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 59-րդ հոդվածի՝ 4-րդ մասում «տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում» բառերն առաջարկում ենք փոխարինել «հանրային» բառով՝ նպատակ ունենալով նախատեսել, որ կադրերի ռեզերվում	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			գրանցված լինելու ժամանակահատվածը համարվելու է հանրային ծառայության ստաժ, քանի որ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայությունն, ինքնին, համարվելու է հանրային ծառայության առանձին տեսակ: 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9. Ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու, կադրերի ռեզերվից հանելու և կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգը սահմանում է Հանձնաժողովը»: Առաջարկվող խմբագրությամբ տարբերակում լրացվել է, որ Հանձնաժողովն է սահմանում նաև կադրերի ռեզերվից պաշտոնների համալրման կարգը, քանի որ հիշյալ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության պաշտոնները համալրվում են նաև կադրերի ռեզերվից, իսկ թե ինչ կերպ էր այդ համալրումը կատարվում, կարգավորում չէր նախատեսվել:		
68.	**ՀՀ կառավարություն**	60-րդ հոդված 1-ին մաս	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 60-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «հաջորդող օրվանից» բառերով՝ նպատակ ունենալով, որպեսզի օրենքն առավել շուտ ուժի մեջ	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			մտնի:		
69.	**ՀՀ կառավարություն**	61-րդ հոդված 1-ին, 2-3-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ մասեր	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 61-րդ հոդվածի՝ - 1-ին մասից առաջարկում ենք հանել «սույն օրենքով նախատեսված» բառերը, քանի որ ինքնին հասկանալի է, թե խոսքն ինչի մասին է: - 2-րդ մասում «Կառավարությունն» բառն առաջարկում ենք փոխարինել « սույն օրենքով նախատեսված մարմիններն» բառերով, իսկ «իրականացնում է» բառերը փոխարինել «իրականացնում են» բառերով՝ հաշվի առնելով, որ առաջարկվում է փոփոխել Հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրող մարմինների կազմը: -6-րդ մասում «հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի մեկնարկից հետո երկու ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «օրենքի ուժի մեջ մտնելուց երեք ամսվա ընթացքում» բառերով՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի անդամների նշանակման գործընթացի համար անհրաժեշտ ժամկետները: -8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հանձնաժողովը համարվում է ձևավորված, եթե Ազգային ժողովի կողմից նշանակվել են Հանձնաժողովի առնվազն չորս անդամ: Հանձնաժողովն իր կազմավորումից հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատում է իր	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			կանոնադրությունը և կառուցվածքը:»: -8-րդ մասում լրացվող առաջին նախադասությամբ նպատակ ունենք հստակեցնելու, թե կոնկրետ Հանձնաժողովի քանի անդամի նշանակման դեպքում է Հանձնաժողովը համարվելու ձևավորված: Այդ առնչությամբ հաշվի առնելով, որ Հանձնաժողովի նիստի իրավազորության համար նախատեսված է Հանձնաժողովի 4 անդամի պարտադիր ներկայության պահանջ, հետևաբար առաջարկվում է, որ 4 անդամ նշանակվելու դեպքում Հանձնաժողովը համարվի ձևավորված: 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «11. Հանձնաժողովի կառուցվածքի, պաշտոնների անվանացանկի և հաստիքացուցակի հաստատումից հետո մինչև հաստիքների օրենքով սահմանված կարգով համալրումը Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության հաստիքները զբաղեցվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով, իսկ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության հաստիքները զբաղեցվում են սույն օրենքով սահմանված ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով:» Առաջարկվող խմբագրությամբ		

			հնարավորություն կստեղծվի հստակ տարանջատել նախքան Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության և տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության հաստիքների օրենքով սահմանված կարգով համալրումը, դրանք զբաղեցվեն ժակետային աշխատանքային պայմանագիր կնքելու եղանակով՝ քաղաքացիական ծառայության հաստիքների դեպքում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով, իսկ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայության հաստիքների դեպքում այս օրենքով սահմանված կարգով:		
70.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի վերնագիր**	«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում առաջարկում ենք վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, իսկ «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով, որ նախագծով նախատեսվում են մեկից ավելի փոփոխություն:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
71.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի վերնագիր	«Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			նախագծում առաջարկում ենք վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:		
72.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	«Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)», «/այսուհետ՝ Օրենք/» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում օրենքին այլևս հղում չի կատարվում:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
73.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված 2-րդ մաս**	««Պետական գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ գլխի 31. 2-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվում է «մշակող (կատարող)», իսկ 2-րդ մասում՝ «մշակող /պատրաստող/» ձևակերպումը: Առաջարկվում է նշված հոդվածի 2-րդ մասում «մշակող /պատրաստող/» բառերը փոխարինել «մշակող (կատարող)» բառերով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
74.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	««Պետական գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «մինչև 2026	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			թվականի հունվարի 1-ը» բառերը փոխարինել «սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում» բառերով՝ նախատեսելով բավարար ժամանակահատված օրենքից բխող իրավական ակտերի մշակման և ընդունման համար:		
75.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի վերնագիր և 1-ին հոդված	«Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: Նաև առաջարկում ենք հիշյալ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին հղում կատարելիս ևս հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ «/այսուհետ՝ Օրենք/» բառերը փոխարինել «(այսուհետ՝ Օրենք)» բառերով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
76.	**ՀՀ կառավարություն**	2-րդ հոդվածի 2-րդ մաս	«Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «մարմինը» բառից հետո առաջարկում ենք լրացնել «:» կետադրական նշանը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

77.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդվածի 2-րդ մաս	««Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «նորմատիվ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «իրավական» բառը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
78.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)», ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հիշյալ օրենքի նախագծում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
79.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված կարգավորումն առաջարկում ենք համարակալել:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
80.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել ոչ թե «տեղեկատվական համակարգ»	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հասկացությունը, այլ համապատասխան չհամարկալված պարբերությունը, ինչպես նշվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում:		
81.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածում լրացվող նոր 1.2-րդ մասի համարը տեքստից առաջարկում ենք բաժանել միջակետով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
82.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում առաջարկում ենք «Ինքնավար մարմնի» բառերից առաջ լրացնել ««Կիբեռանվտանգության մասին» օրենքով նախատեսված» բառերը, քանի որ Ինքնավար մարմնի համակարգչային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմերի մասին նշվում է «Կիբեռանվտանգության մասին» օրենքում:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
83.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք ««Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները,» բառերը հանել» բառերը փոխարինել ««Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները, կենսաչափական» բառերը փոխարինել «Կենսաչափական» բառով:» բառերով՝ ինկորպորացիայի ժամանակ խնդիրներից խուսափելու նպատակով:		
84.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 189.31-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք վերանայել և հստակեցնել դիսպոզիցիան՝ «Տեղեկատվական համակարգերում տվյալներ կամ տեղեկություններ մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող միջոցառումներ չիրականացնելը կամ օրենքով» բառերը փոխարինելով «Տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցառումների համակարգով նախատեսված պահանջները չպահպանելը կամ տվյալներ կամ տեղեկություններ մշակելուն օրենքով» բառերով, որպեսզի յուրաքանչյուր անձի համար հստակ և	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			որոշակի լինի իր վրա դրված պարտականությունը, դրա բովանդակությունը, ինչպես նաև կանխատեսելի լինեն իր վրա դրված պարտականության չկատարման հետևանքները:		
85.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդված**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 193.4-րդ հոդվածի՝ - 3-րդ և 5-րդ մասերում առաջարկում ենք հստակեցնել դիսպոզիցիաները՝ դրանք համապատասխանեցնելով «Կիբեռանվտանգության մասին» օրենքով նախատեսված համապատասխան ձևակերպումներին, ինչպես նաև իրավական որոշակիության ապահովման, իրավական շփոթի և տարաբնույթ մեկնաբանությունների առաջացումից խուսափելու համար: Հետևաբար՝ - 3-րդ մասում «չծանուցելը» բառից հետո առաջարկում ենք լրացնել «կամ կիբեռմիջադեպի վերաբերյալ թարմացված տեղեկատվություն չտրամադրելը՝ ներառյալ կիբեռմիջադեպի ծանրության և ունեցած հետևանքների մասով,» բառերը, իսկ 5-րդ մասում «կարգով» բառից հետո հանել «կիբեռմիջադեպի ծանրության, ձեռնարկված միջոցառումների եւ	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			կիբեռմիջադեպի ունեցած հետեւանքների մասին կազմված հաշվետվությունը,» բառերը: - 9-րդ և 10-րդ մասերում կիրառված «և/կամ» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «կամ» շաղկապով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջները:		
86.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ հոդված**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 171.13-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «առաջացնում է» բառից հետո լրացնել «նախազգուշացում կամ» բառերը՝ սահմանելով նաև նախազգուշացման կիրառման հնարավորություն իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ՝ ապահովելու համար համաչափ պատասխանատվություն բոլոր սուբյեկտների նկատմամբ:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
87.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ հոդված**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 243.1-ին հոդվածի համարն առաջարկում ենք վերնագրից բաժանել միջակետով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

88.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդվածի 1-ին մասում	««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «արհեստական բանականության» բառից առաջ առաջարկում ենք լրացնել «,» կետադրական նշանը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
89.	**ՀՀ կառավարություն**	2-րդ հոդված	«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում առաջարկում ենք «գլխավոր պաշտոնների 1-ին» բառերը փոխարինել «ամենաբարձր խմբի ամենաբարձր» բառերով՝ նկատի ունենալով, որ «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքում» պաշտոնների խմբերը և ենթախմբերը սահմանող 41-րդ և 42-րդ հոդվածներում կատարվել են փոփոխություններ:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
90.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում առաջարկում ենք ճշգրտել համարակալումը:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
91.	**ՀՀ կառավարություն**	Նախագծերի փաթեթում ներառված առանձին օրենքների նախագծերի նշված հոդվածներ	«Տեղեկատվության ազատության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Պետական գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			հոդվածի, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ		

			հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը:		
92.	**ՀՀ կառավարություն**	Նախագծերի փաթեթում ներառել նոր՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Հանձնաժողովը լիազորվում է օրենքով սահմանված դեպքում դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում աջակցություն ստանալու նպատակով: Սակայն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները չունեն պարտականություն Հանձնաժողովին աջակցելու, քանզի Նախագծերի փաթեթով լրացում չէր կատարվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածում: Հետևաբար «Տեղեկատվական		**Ընդունվել է**

			համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի կարգավորման լիարժեքությունը ապահովելու նպատակով առաջարկվում է Նախագծերի փաթեթում ներառել նոր՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ հետևյալ բովանդակությամբ. «		

			<u>ՆԱԽԱԳԻԾ</u> **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՕՐԵՆՔԸ** **«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***Հոդված 1.*** «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի 11-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասի 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «. » կետադրական նշանով:		

			2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով. «6) աջակցել տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնին՝ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառում իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում՝ դիմումի հիման վրա հայցվող՝ իրենց հայտնի դարձած տվյալները (տեղեկությունները) տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնին փոխանցելով:»: ***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի ուժի մեջ մտնելու պահից: »:		